

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Ռուսաստան Կը Շարունակէ Անհանգստանալ

Կասկածէ վեր է որ Ռուսաստան-Ռուսաստան յարաբերութիւնները իրենց լաւագոյն օրերուն մէջ չեն: 44-օրեայ պատերազմէն ետք Երեւան երկար ժամանակ կը կարծէր թէ, պատերազմը հայկական ինքնիշխան տարածք փոխադրուելու պարագային Ռուսաստանի պիտի փութայ օգնութեան հասնելու իր ռազմավարական դաշնակիցին՝ զսպելով Ատրպէյճանի նկրտումները տարածաշրջանէն ներս:

Ռուսաստան նաեւ կը յուսար որ, Ռուսաստան պիտի օգնէ, որպէսզի Ռուսական զինուած ուժերը նոր զինատեսակներ ձեռք ձգեն ու կարողանան դիմադրել Ատրպէյճանի ներխուժման փորձերուն: Երկար սպասումէ ետք չիրականացան այդ ակնկալութիւնները, հակառակ որ, Ռուսաստան Ռուսաստանին վճարած էր հարիւրաւոր միլիոն տոլար, սակայն այդ գէնքերը չհասան Ռուսաստան, ստիպելով վարչապետ Փաշինեանին Ազգային ժողովէն ներս հրապարակաւ հանդէս գայ այդ մասին:

Անցեալ տարուայ Սեպտեմբերին, երբ Ազգի բանակը դարձեալ ներխուժեց Ռուսաստանի հողերէն ներս՝ գրաւելով զգալի տարածքներ, Երեւան պաշտօնապէս դիմեց Ռուսաստան Անվտանգութեան կազմակերպութեան ՅԱՊԿԿԻՆ՝ խնդրելով օգնութեան հասնելու իրենց դաշնակիցին: ՅԱՊԿ ոչ միայն չընդառաջեց օգնութեան խնդրանքին, նոյնիսկ դատապարտումի խօսք չըսաւ Ատրպէյճանի թշնամական քայլերուն՝ Կազմակերպութեան անդամ երկրի մը դէմ:

Այս իրողութեան լոյսին տակ Ռուսաստան սկսաւ փնտռել զենքի այլ աղբիւրներ եւ դաշնակիցներ՝ իր հայեացքը ուղղելով Յնդկաստանին եւ Արեւմուտքին:

Յնդկաստանէն զենք ստանալու հարցով Մոսկուան հրապարակային վերապահութիւն չյայտնեց, հաւանաբար այն պատճառաւ որ, Յնդկաստան չէզոք երկիր կը համարուի, իսկ անոր արտադրած զենքերը Ռուսաստանէն զենքերու կրկնօրինակն է՝ աւելի արդիականացած:

Հարցը երբ հասաւ Ռուսաստանի յարաբերութիւններուն՝ Միացեալ Նահանգներուն եւ Եւրոպական երկիրներուն հետ, Մոսկուան սկսաւ անհանգստանալ: Վերջերս երբ յայտնի դարձաւ որ, Եւրոպական դիտորդական առաքելութիւն պիտի ժամանէ Ռուս-Ատրպէյճանական սահ-

Ռայաստանը Խաղաղութեան Պայմանագրի Վերաբերեալ Հերթական Առաջարկը Ստացած Է Ատրպէյճանէն. Միրզոյեան

Ատրպէյճանը արձագանգած է խաղաղութեան պայմանագրի նախագիծին վերաբերեալ հայկական կողմի առաջարկներուն: «Երեւանը ստացել է Պաքուի պատասխանը եւ այժմ աշխատում է դրա վրայ», Պերլինի մէջ պատասխանելով «Ազատութիւն» ռատիօկայանի հարցումին՝ յայտնեց Հայաստանի արտաքին գործերու նախարարը:

«Մի քանի օր առաջ ստացել ենք ատրպէյճանական հերթական արձագանգը եւ առաջարկները: Ես կրկնում եմ՝ սա շարունակական գործընթաց է, եւ մենք շարունակում ենք աշխատել բնագրի վրայ՝ մի քանի փուլերով փոխանակելով առաջարկներ եւ շարունակելով քննարկումը», նշեց նախարարը:

Արարատ Միրզոյեան չչստակացուց, թէ ինչ գրուած է Պաքուէն ուղարկուած փաստաթուղթին մէջ, արդեօք ատրպէյճանական արձագանգը ընդունելի է Հայաստանի համար, եւ Երեւանը ինչպէս պիտի պատասխանէ անոնց: Յայտնի է միայն, որ հայկական կողմը սեփական առաջարկները Պաքուին Մոսկուայի միջոցով փոխանցած էր շաբաթներ առաջ: Անոր մանրամասնութիւնները եւս յայտնի չեն, Միրզոյեան հրաժարած էր բանալի փակագիծերը՝ շաբաթներ առաջ



Ռայաստանի եւ Գերմանիոյ արտաքին գործոց նախարարները՝ հմատեղ մամլոյ ասուլիսի ընթացքին

ելուցի ռուսներով խորհրդարանին մէջ: Այս ասուլիսին ալ աւելին չըսաւ, միայն ընդգծեց, որ չնայած Լազինի միջանցքին շուրջ ստեղծուած իրավիճակին՝ հայ-ատրպէյճանական յարաբերութիւններու կարգաւորման գործընթացը կանգ չէ առած, բանակցութիւնները կը շարունակուին:

«Հայաստանը հաստատակամօրէն է ներգրաւուած այս բանակցութիւններում, եւ մենք նպատակ ունենք շարունակել մեր աշխույժ

ջանքերը մեր տարածաշրջանում կայուն եւ երկարատեւ խաղաղութիւն կառուցելու գործում: Ուզում եմ Ձեզ տեղեկացնել, որ Դեկտեմբերին նախատեսուած էր իմ եւ նախարար Պայրամովի, ինչպէս նաեւ նախարար Լաւրովի հերթական հանդիպումը:

Այս անգամ այն պէտք է տեղի ունենար Մոսկուայում, բայց Լազինի միջանցքի արգելափակման պատճառով հայկական կողմը յետաձգեց մասնակցութիւնը, եւ չնայած այս հանգամանքին՝ մենք ատրպէյճանական կողմին, ինչպէս Դուք մէջբերեցիք, փոխանցեցիք մեր նոր առաջարկները խաղաղութեան պայմանագրի շուրջ», յաւելեց ան:

Հայաստանի արտաքին գործերու նախարարը միաժամանակ զգուշացուց, որ բանակցութիւններու հարթ ընթացքին ամենեւին չեն նպաստեր զեանի վրայ Ատր-

Ռայաստան Պատրաստ Է Օգնութիւն Տրամադրելու.

Փաշինեան Ցաւակցած Է Թուրքիոյ Եւ Սուրիոյ Մէջ Երկրաշարժէն Տուժածներուն



Երկրաշարժէն տուժած է Հալկայի Կիլիկեան երկրորդական վարժարանը

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան ցաւակցութիւններ յայտնած է թրքական Քահրամանմարաշ նահանգին մէջ Փետրուար 6-ի վաղ առաւօտեան 7.4 աստիճան հզօրութեամբ երկրաշարժին հետեւանքով թուրքիոյ եւ Սուրիոյ մէջ արձանագրուած զոհերու ընտանիքներուն:

«Վշտացած եմ թուրքիացում եւ Սիրիացում աւերիչ երկրաշարժի առնչութեամբ, որն այդքան շատ մարդկային կեանքեր է խլել: Մեր խորին ցաւակցութիւնները զոհերի ընտանիքներին, իսկ վիրաւորներին մղթում ենք շուտա-

Շար.ը էջ 5

Ռայաստանը Յառաջխաղացք Արձանագրած Է Եւ Ժողովրդավարութեան Ցուցիչով 82-րդն Է

The Economist Intelligence Unit վերլուծական խումբին կազմած՝ Ժողովրդավարութեան 2022 թուականի ցուցիչով Հայաստանը ճանչցուած է «հիպրիտային երկիր» եւ զբաղեցուցած է աշխարհի մէջ 82-րդ տեղը:

Հայաստանը առաջ է 90-րդ տեղը գրաւած «հիպրիտային երկիր» համարուող Վրաստանէն եւ 103-րդ տեղը գրաւած Թուրքիայէն:

Մնացեալ հարեւաններուն մօտ հաստատուած է «մենասիրական վարդապարտ»:

Ատրպէյճանը 134-րդ տեղն է, Ռուսիան՝ 146-րդ եւ Իրանը՝ 154-րդ:

Շար.ը էջ 6

Շար.ը էջ 6

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

«Արցախը Ատրպեյճանի Կազմում Ծանաչելու» Մեջ Մեղադրած Ընդդիմութիւնը Ազգային Ժողովի Լուսնների Ժամանակ Առերեսուեց Իր Կեղծ Թեզերի Գերքմանը

ԳԵՂԻՆԵ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ընթերցողը նկատած կը լինի, որ ընդդիմութիւնը ԱԺ տաքուկ եւ յարմարաւէտ դահլիճում միջոցառումներ է հրաւիրում այն ժամանակ, երբ դրսում եղանակային պայմաններն այնքան էլ պատշաճ չեն փողոցային ակցիաներ իրականացնելու համար: Հետեւապէս թանկարժէք վերարկուներն ու կոշիկները թրջել-ցեխոտելու փոխարէն կարելի է հաշուի առնել սեզոնի առանձնայատկութիւններն ու կազմակերպել դահլիճային միջոցառումներ:

«Հայաստան» խմբակցութիւնը հենց այդ մտայնութեամբ էլ այսօր խորհրդարանական լուսններ էր հրաւիրել «Լաչինի միջանցքը պարբերաբար փակելու վերաբերեալ»: Նախապէս, սակայն, ԱԺ պաշտօնական կայքը ծանուցել էր, որ տեղի են ունենալու (ուղիղ միացումն էլ հենց այդպէս էր վերնագրուած) «Ատրպեյճանի կողմից Լաչինի միջանցքը փակելու վերաբերեալ» «Հայաստան» խմբակցութեան ներկայացրած ԱԺ յայտարարութեան նախագծի առնչութեամբ խորհրդարանական լուսններ: Լուսնները, սակայն, ծաւալուեցին ոչ թէ խմբակցութեան հեղինակած բուն նախագծի շուրջ, որը շրջանառութեան մէջ էր դրուել դեռեւս 2022 թ. Դեկտեմբերին, սակայն այդպէս էլ չընդունուեց ԱԺ-ի կողմից, այլ եւս մէկ անգամ ընդդիմութեան

այն «դոզման» ապացուցելու, թէ՛ իշխանութիւնները «ձեռքերը լուացել են Արցախից», «առեւտրի առարկայ» են դարձրել Արցախի հարցը, իսկ Լաչինի միջանցքը, ինչպէս նաեւ «Հայաստան»-ական Անդրանիկ Թեւանեանը, «կարող է բացուել միայն այն ժամանակ, երբ ՀՀ-ում փոխուի քաղաքական իշխանութիւնը, եթէ փոփոխուի քաղաքականութիւնը»: Կարճ ասած՝ երբ իշխանափոխութիւն տեղի ունենայ: Փոքից է, որ «Արցախը առեւտրի առարկայ դարձրած» իշխանութիւնը, գործի դնելով դիւանագիտական բոլոր գործիքները, ամէն ինչ անում է մէկ ժամ շուտ միջանցքը բացելու համար, իսկ ՄԱԿ-ի Արդարադատութեան դատարանում նոյն այդ «Արցախից ձեռքերը լուացած» իշխանութիւնը Լաչինի միջանցքի բացման հարցը տանում է Հաագայի դատարան եւ ընդդէմ Ատրպեյճանի հայց ներկայացնում:

Այնպիսի տպաւորութիւն ունենք, որ ընդդիմութեան յաջորդ լուսնները տեղի են ունենալու ուշ գարնանը եւ վերաբերելու են եղանակին՝ եթէ, իհարկէ, այս տարի բաւարար չափով ձիւնն ու անձրեւ չտեղայ եւ ջրամբարներում անհրաժեշտ չափով ջուր չկուտակուի: Անդրանիկ Թեւանեանն ու նրա խմբակցութիւնը երեւի մի յայտարարութեան նախագիծ կը դնեն շրջանառութեան մէջ, որում էլ լի ամէն ինչ կը կապեն իշխանափո-

խութեան հետ, ասենք այսպէս՝ քանի այս կապիտուլեանտ իշխանութիւնն է դեկին, ուրեմն Հայաստանը ձեռն ու անձրեւի երես չի տեսնելու, քանի որ Հայաստանը «ձեռքերը լուացել» է գիւղատնտեսութիւնից:

Վերադառնալով լուսններին՝ նշենք, որ դրանք թէեւ Ֆորմալ առումով նուիրուած էին միջանցքի փակմանը, սակայն սկսած վերածուեցին ընդդիմութեան կեղծ, խեղաթիւրուած թէզերից մէկի հերքմանը, եթէ չասենք՝ պայթեցմանը, որի վրայ էլ ընդդիմութիւնը վերջին մի քանի ամիսներին կառուցել էր իր քարոզչական մարտավարութիւնը: Խօսքը մասնաւորապէս Պրահայում նախորդ տարի Հոկտեմբերին ստորագրուած յայտարարութեան մէջ Ալմա-Աթաչի հռչակագրի յիշատակմանն է վերաբերում: Ընդդիմութիւնն ամիսներ շարունակ հասարակութեանը մանիպուլացնում էր այն վտանգաւոր պնդմամբ, թէ յիշեալ հռչակագրին չղուծ անելով կամ այն «մեյտան բերելով»՝ «ՀՀ կապիտուլեանտ իշխանութիւնը ծախել է Ղարաբաղը Ատրպեյճանին»: Արցախը ճանաչելով Ատրպեյճանի մաս:

Այսօրուայ միջոցառման «գլխաւոր դիրիժոր» Սեյրան Օհանեանն ու «առաջին ջուլթակ» Անդրանիկ Թեւանեանը, որը կաշուից դուրս գալով իր ելույթում Արցախը՝ Լաչինի միջանցքով հան-

դերձ, Ալմա-Աթաչի հռչակագրով եւ ՀՀ իշխանութեան ձեռամբ մի քանի անգամ ճանաչեց Ատրպեյճանի կազմում, չէին սպասում նման շրջադարձ ու քարոզչական ապտակ իրենց իսկ հրաւիրեալների կողմից: Թեւանեանն, ի դէպ, կիրառելով քարոզչական փինաչիութեան տեխնոլոգիան, յայտարարեց, թէ ՀՀ-ն չի խառնուում Լաչինի միջանցքի բացմանը, քանի որ Նիկոլ Փաշինեանը Պրահայում համաձայնել է, որ Ղարաբաղն Ատրպեյճան է: Իր ելույթի սկզբի հատուածում պարոն պատգամաւորն այդպէս էլ չի շատակեց պրահեան փաստաթղթի այն տողը կամ բառը, որը կապացուցեր իր արած սոյն պնդումը, քանի որ եթէ յիշատակէր, ապա կը հակասէր ինքզինքը, քանի որ ենթադրեալ տողը կամ բառը, որոնցով Արցախը «ճանաչուած է» Ատրպեյճան, Ալմա-Աթաչի հռչակագրին արուած չղուծն է: Իր խօսքի յաջորդ հատուածում, սակայն, պարոն Թեւանեանը ստիպուած եղաւ յիշատակել այդ չարչրկուած փաստաթուղթը, միայն թէ՛ Ալիեւի մեկնաբանմամբ. «Աստանայում՝ Պրահայից յետոյ, Ալիեւը յայտարարում է, որ մենք Պրահայում եկանք էն եզրակացութեան, էն կարծիքին, որ Ղարաբաղը պատկանում է Ատրպեյճանին, եւ դարբաղցիների հետ Պաքուն շփուելու է ատրպեյճանական ներքին

Շար.ը էջ 15

Հաագայի Դատարանում Եւս Ատրպեյճանը Կրկնեց Բազմիցս Գերքուած Կեղծ Թեզերը

ԼՈՒՍԻՆԵ ՈՍԿԱՆԵԱՆ

ՍԽԱԼ
Յունուարի 30-ին՝ ՄԱԿ Արդարադատութեան միջազգային դատարանում «Հայաստանն ընդդէմ Ատրպեյճանի» հայցով լուսնների ընթացքում, Ատրպեյճանի ներկայացուցիչ էլնուր Մամադովը «անհիմն մեղադրանք» է որակել Ատրպեյճանի կողմից Լաչինի միջանցքը արգելափակելու մասին Հայաստանի յայտարարութիւնը:

Ատրպեյճանի ներկայացուցիչներն առաջին անգամ չէ, որ պնդում են, թէ Գորիս-Ստեփանակերտը ճանապարհը բաց է:

Էկոնակտիւստ ներկայացող եւ Ատրպեյճանի իշխանութիւնների հետ փոխկապակցուած մի խումբ ատրպեյճանցիներ 2022 թ. Դեկտեմբերի 12-ից փակել են Լաչինի միջանցքը՝ այնտեղ վրաններ տեղադրելով: Այդ գործողութեամբ Ատրպեյճանը խախտել է 2020 թ. Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան 6-րդ կէտը, որով «Ատրպեյճանի Հանրապետութիւնը երաշխաւորում է Լաչինի միջանցքով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների եւ բեռների՝ երկու ուղղութիւններով տեղաշարժի անվտանգութիւնը»:

«Փաստերի ստուգման հարթակը» բազմիցս անդրադարձել է այդ պնդումներին:

«Լաչինի ճանապարհի վրայ գործող ռեժիմն այսօր նոյնն է, ինչ մինչեւ բողոքի ցույցերը»:

Մամադովը պնդել է, որ ՀՀ ներկայացուցիչների յայտարարութիւնները, թէ Լաչինի միջանցքը արգելափակուած է, կեղծ է. «Լա-

չինի ճանապարհի վրայ գործող ռեժիմը ներկայում էլ նոյնն է, ինչ մինչեւ բողոքի ցույցերը»:

Նրա խօսքով՝ ցուցարարները չեն խոչընդոտում ճանապարհով մեքենաների տեղաշարժը եւ ամէն օր տասնեակ մեքենաներ ու բեռնատարներ են անցնում բողոքի ակցիայի վայրի մոտով: Մամադովը պնդել է, որ ատրպեյճանցի ցուցարարների ու ճանապարհն օգտագործող անձանց միջեւ ոչ մի բռնութիւն եւ առճակատում չի գրանցուել: Անդրադառնալով այն դէպքին, երբ ատրպեյճանցի ցուցարարները, ներխուժելով մի խումբ հայ երեխաների Ստեփանակերտ տեղափոխող ատոբուս, ահաբեկեցին անչափահասներին, Ատրպեյճանի ներկայացուցիչը պնդել է, թէ ՀՀ-ն իր այդ պնդումը ոչ մի կերպ չի կարող հիմնաւորել, իսկ ատրպեյճանցիների ցույցերը խաղաղ են:

Էլնուր Մամադովին իրականում աղաւաղում է փաստերը եւ մանիպուլացնում:

Դեկտեմբերի 12-ից դէպի Ստեփանակերտ տեղաշարժը արգելափակուած է: Հատուկէնտ ուղեւորութիւններ են այդ ուղղութեամբ տեղի ունենում, այն էլ՝ միայն կարմիր խաչի միջազգային կազմակերպութեան կամ ռուս խաղաղապահ զօրակազմի ուղեկցութեամբ:

Չնայած հումանիտար ճգնաժամին եւ սննդամթերքի ու դեղորայքի պակասին՝ բեռների փոխադրութիւնը նոյնպէս կասեցուած է: Օրինակ՝ «Հայաստան» հիմնադրամի մօտ 100 տոննա մարդասիրական բեռը շաբաթներ շարունակ Արցախ չի հասնում ատրպեյճանա-

կան կողմի արգելքի պատճառով:

Մինչեւ միջանցքի արգելափակումը Հայաստանից ամէն օր 400 տոննա սննդամթերք ու դեղորայք է տեղափոխուել Արցախ, մինչդեռ շարունակուող արգելափակման 45 օրուայ ընթացքում միջանցքով հումանիտար բեռների ընդամէնը մի քանի տասնեակ անցում է գրանցուել՝ նոյնպէս բացառապէս կարմիր խաչի միջազգային կողմից կամ ռուս խաղաղապահների ուղեկցութեամբ:

Լեւոնային Ղարաբաղում հումանիտար իրավիճակի մասին կարող էք կարգալ այստեղ:

Ինչ վերաբերում է Մամադովի պնդմանը, թէ Հայաստանը չի կարող հիմնաւորել ատոբուսով Ստեփանակերտ գնացող երեխաներին ահաբեկելու մասին յայտարարութիւնը, ապա այս դէպքում էլ նա մանիպուլացնում է:

Յունուարի 18-ին միջանցքի արգելափակուած հատուածում ատրպեյճանցի «էկոնակտիստները» ներխուժել են ամսից աւելի տուն վերադառնալու հնարաւորութիւնից զրկուած արցախցի երեխաներին ռուս խաղաղապահների ուղեկցութեամբ Արցախ տեղափոխող ատոբուսը եւ նկարահանել անչափահասներին, ինչի հետեւանքով երեխաներն ահաբեկուել են, նրանցից մէկն ուշաթափուել է:

Այսպիսով, Ատրպեյճանի ներկայացուցիչը Հաագայի դատարանում կրկնել է Լաչինի միջանցքն արգելափակելու ի վեր Պաքուի կողմից շրջանառուած, բայց բազմիցս հերքուած կեղծ թէզերը:

«FIP.am»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆԶԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Օհանեանի Մասնակցութեամբ Ջորամասի Օտարման Պետական Շահի Տեսանկիւնէն Որեւէ Բացատրութիւն Զէ Տրուած. Գլխաւոր Դատախազ

ՀՀ գլխաւոր դատախազ Աննա Վարդապետեան, պաշտօնակազմի նախարար, ԱԺ «Հայաստան» խմբակցութեան ղեկավար Սէյրան Օհանեանի նկատմամբ քրէական հետապնդում չարուցելուն ԱԺ-ի կողմէ համաձայնութիւն տալու միջնորդութեան ներկայացման ժամանակ ընդգծեց, որ զօրամասի տարածքը օտարելու համար պետական շահի տեսանկիւնէն որեւէ բացատրութիւն չէ հնչած:



ՀՀ գլխաւոր դատախազ Աննա Վարդապետեան

Ղեկավարող զեմ ցուցմունք տուած է նաեւ ՀՀ Զինուած Ուժերու Գերագոյն Շտաբի նախկին պետ, ՀԱՊԿ նախկին գլխաւոր քարտուղար Եուրի Սաչախուրդի որդին՝ Յորգ Բախախանյանը զօրամասի նախկին հրամանատար Գրիգորի Սաչախուրդի:

«Օհանեանի կողմից այդ արարքները կատարուած հաստատուել է նաեւ վկաներ՝ Նորայր Կարապետեանի, Արմէն Գէորգեանի, Էտիկար Արշակեանի, Գրիգորի Սաչախուրդի, Արմէն Յակոբեանի, Վարուժան Մուրատեանի եւ 2005 թուականի Սեպտեմբերի 5-էն մինչեւ 2010 թուականի Սեպտեմբերի 10 ընկած ժամանակահատուածում կառավարութեանն առընթեր անշարժ գոյքի Կադաստրի Պետական Կոմիտէի աշխատակազմի վեպի տարածքային ստորաբաժանման ղեկավար-անշարժ գոյքի պետական ռեգիստրի պաշտօնը զբաղեցրած Էտիկ Աւետիսի Աւետիսեանի ցուցմունքներով», նշեց Վարդապետեան:

Միջնորդագրի ներկայացումէն յետոյ գլխաւոր դատախազին հարց տուաւ ԱԺ նախագահ Ալէն Սիմոնեանը. «Որքանով ես հասկացայ՝ զօրամասի տարածքը սեփականաշնորհուել է, յանձնուել է երրորդ անձի եւ դրանից յետոյ գրաւադրուել է: Կա՞ որեւիցէ բացատրութիւն, թէ ինչո՞ւ ես զօրամասի տարածքը յանձնել երրորդ մէկին, դրանից յետոյ գրաւադրել դրամատնում»:

Վարդապետեան ըսաւ, որ պետական շահի տեսանկիւնէն բացատրութիւն չէ հնչած: «Հիմնական բացատրութիւնը, որ, որպէս իրաւաբան ինձ հասկանալի է այդ համապատկերի մէջ, կայանում է նրանում, որ երրորդ անձի անունով գոյքը գրանցելը ի սկզբանէ նպատակ է ունեցել թաքցնել իրական գնորդին, այսինքն՝ ցոյց չտալ, թէ ում է օտարուած տարածքը: Հետագայում, ի հարկէ, դրամատնում գրաւադրուած եւ շահառուին վերհանելը, ով դրամատնից ստացել է գումար, մեզ հնարաւորութիւն է տուել բացառապէս իրական սեփականատիրոջը: Թոյլ կը տամ ինձ ասել, որ պետական շահի տեսանկիւնից որեւէ բացատրութիւն չի հնչել», ըսաւ Վարդապետեան:

«Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Սէյրան Օհանեանի

Զեմ Կարծեր, Թէ Ընդդիմութեան Որեւէ Գործողութիւն Կրնայ Ժողովուրդը Որեւէ Բանէ Շեղել. Սիմոնեան

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան չի կարծեր, թէ ընդդիմութեան որեւէ գործողութիւն կրնայ ժողովուրդը շեղել հիմնական խնդիրներէն, օրակարգերէն:

Սիմոնեան նման համոզմունք յայտնեց ԱԺ-ի մէջ լրագրողներու հետ ձեպագրուցին՝ անդրադառնալով ընդդիմութեան յայտարարութիւններուն, թէ Սէյրան Օհանեանի նկատմամբ քրէական հետապնդում չարուցելուն համաձայնութիւն տալու միջնորդութիւնը բերուած է հանրութեան ուշադրութիւնը շարք մը խնդիրներէ, այդ շարքին՝ զօրամասի կացարանին մէջ տեղի ունեցած ողբերգական հրդեհի դէպքէն շեղելու նպատակով:

Սիմոնեան նշեց, որ ցաւով կը մօտենայ ընդդիմութեան այն արձագանքին:

«Ձեռ կարծում, թէ իրենց վերջին արարքներէց յետոյ ընդդիմութեան որեւէ գործողութիւն կարող է ՀՀ ժողովուրդին որեւիցէ բանից շեղել: Իրենք գերագնահատում են իրենց դերը հայաստանեան քաղաքական դաշտում: Եւ իրենց քաղաքական գործունէութիւնը յետոս է գուտ սահմանին տեղի ունեցող յարձակումները եւ թշնամու կողմից արուած քայլերի վրայ շահաբաժիններ եւ օրակարգեր ձեւաւորելու վրայ: Կարող եմ իրենց հանգստացնել. եթէ իրենց բոլորին էլ ձեռքաւար են, հիմնական օրակարգերից, հիմնական խնդիրներից ՀՀ ժողովուրդը չի շեղուի, թող իրենց չգերագնահատեն», ըսաւ ԱԺ նախագահը:

Սիմոնեան կարեւորեց, որ մարդոց մօտ տպաւորութիւն չըլլայ,



ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեան

թէ խորհրդարանին մէջ դատաւարութիւն տեղի կ'ունենայ: «Ընդամէնը ԱԺ-ն թոյլ կու տայ (դեռ չգիտեմ), որ քրէական գործը շարունակուի», ըսաւ ԱԺ նախագահը՝ յաւելելով, որ չի համարեր, թէ այդ քայլը ներքին պառակտում կ'առաջացնէ:

Սիմոնեան ընդգծեց, որ իշխանութիւնը աւելի շատ կը մեղադրեն «երկաթէ մանտաթը» չիրագործելու, թաւշեայ ըլլալու մէջ:

«Սէյրան Օհանեանն այսօր չգալով եւ վաղեմութեան հետ կապուած չստորագրելով՝ շատ ճիշդ քայլ է անում, ուզում է ցոյց տալ, որ նոյնիսկ դատաւարութեան պարագայում կարող է ապացուցել, որ ինքն ազնիւ, արդար աշխատակից է եղել: Եւ, եթէ այդ տրամաբանութեամբ գնանք, մենք ոչ թէ պառակտում ենք, այլ օգնում ենք պարոն Օհանեանին», ըսաւ ԱԺ նախագահը:

Թուրքիոյ Զեմ Սահմանի Բացումը Պիտի Յանգեցնէ Տնտեսական Բարձր Աճի. Քերոբեան

ՀՀ տնտեսութեան նախարար Վահան Քերոբեան վստահ է, որ եթէ աշխարհաքաղաքական հանգամանքները յօգուտ Հայաստանի դասաւորուին, եւ Թուրքիոյ հետ սահմանը բացուի, ապա Հայաստանի բոլոր տնտեսավարողները պիտի զգան անոր դրական ազդեցութիւնը: Քերոբեան նման տեսակէտ յայտնեց «Արմենիա»-ի հետ գրոյցին՝ անդրադառնալով Թուրքիոյ կողմէ վերջերս Հայաստանի հետ ուղիղ օդային բեռնափոխադրումներու իրականացման արգելքը հանելու որոշմանը եւ Հայաստանի տնտեսութեան վրայ անոր հնարաւոր ազդեցութեան վերաբերեալ հարցին:



ՀՀ տնտեսութեան նախարար Վահան Քերոբեան

Կանոնաւոր փոխադրումներ տեղի ունենան:

«Յամենայնդէպս, օդային ուղեւորափոխադրումների հետ մէկ տեղ նաեւ բեռնէր էլ են տեղափոխուում, որն ըստ էութեան, օդային բեռնափոխադրումների մի տարատեսակ է: Ուղղակի բեռնատար օդանավեր չկան դեռ, գուցէ եւ չլինեն էլ: Մենք դրա համար առանձնապէս շատ չենք անհանգստանում», ըսաւ նախարարը:

«Մեր տեղեկութիւններով դեռ եւս կանոնաւոր օդային բեռնափոխադրումներ տեղի չեն ունենում: Եւ, ճիշդն ասած, հաշուի առնելով երկրների իրար մօտ լինելը՝ հաւանական է, որ չլինեն էլ, քանի որ փոխադրութեան կապը ցամաքով՝ Վրաստանի միջոցով, բաւականին մատչելի է: Եւ օդային հաղորդակցութիւնն առաջին հայեացքից այդքան էլ գրաւիչ չէ», ըսաւ Քերոբեան:

Նախարարը, այնուամենայնիւ, չբացառեց, որ որոշակի ապրանքատեսակներու համար այսպիսի

Կայ Զասարակական Մեծ Պահանջ, Որպէսզի Բացայայտուին Պատերազմին Մեր Պարտութեան Պատճառ Դարձած Անձերը. Ա. Քեարամեան

Հայաստանի Քննչական Կոմիտէի նախագահ Արգիշտի Քեարամեանը քննիչներուն հրահանգած է ուժերու գերլարումով աշխատիլ 2020 թուականի Արցախեան պատերազմին վերաբերող քրէական գործերուն քննութիւնը արագացնելու եւ հանրութեան ակնկալիքները բաւարարելու համար: Արգիշտի Քեարամեանը այդ մասին ըրած է Քննչական Կոմիտէի անձնակազմին ընդլայնուած նիստի ընթացքին ունեցած ելուցթին:

«Ձեր կատարած աշխատանքի արդիւնքում պէտք է վերջիվերջոյ բացայայտուեն այն հանգամանքները, որոնց հետեւանքով մենք պարտուել ենք: Եւ դա ոչ միայն մեզ համար է կարեւոր, ոչ միայն կառավարութեան համար է կարեւոր կամ պետութեան, դա կարեւոր է պատմութեան համար, դա կարեւոր է մեր ազգի, մեր ժողովրդի համար: Կայ հասարակական մեծ պահանջ, որպէսզի բացայայտուեն այն անձինք, ովքեր դարձել են պարտութեան պատճառ, որպէսզի բացայայտուեն այն հանգամանքները, որոնց հետեւանքով մենք պարտուել ենք», ըսած է Քեարամեանը:

Ան յաւելած է, որ, չնայած գործերու բարդութեան, չնայած շատ մեծ քանակով ապացուցողական գործողութիւններ կատարելու անհրաժեշտութեան, պէտք է որոշակի ժամկէտային սահմանափա-



Հայաստանի Քննչական Կոմիտէի նախագահ Արգիշտի Քեարամեան

կումներ դնեն այս գործերու քննութեան հանգամանքին մէջ. «Մենք պէտք է հասկանանք, որ ժամանակն անսահման չէ, եւ այն ակնկալիքները, որ հանրութիւնն ու Քննչական Կոմիտէն ունեն այս գործերի քննութեան ընթացքի վերաբերեալ, պէտք է կարճ ժամանակում բաւարարուեն: Այնպէս որ պէտք է ուժերի գերլարումով աշխատենք: Այն բոլոր դրուագները, որոնք արդէն աւարտական տեսք ունեն, պէտք է իրացուեն, բոլոր ուղղութիւնները, որոնք այս ընթացքում պարզաբանուել են, պէտք է իրացուեն»:

ԼՈՒՐԵՐ

Հայաստանի եւ ԵԱՏՄ երկիրներու Միջեւ Ապրանքաշրջանառութիւնը Աճած Է Աւելի Բան 90 Տոկոսով. Նիկոլ Փաշինեան



ԵԱՏՄ-ի երկիրներու վարչապետներու հանդիպումը Ալմաթիի մէջ

Չնայած աշխարհաքաղաքական լարուածութեան՝ փոխադարձ առեւտուրը ԵԱՏՄ-ի մէջ կը շարունակէ դրական աշխուժութիւն դրսեւորել: Ալմաթիի մէջ, Եւրասիական Միջկառավարական Խորհուրդի հերթական նիստին այս մասին ըսաւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Հայաստանի եւ ԵԱՏՄ երկրների միջեւ ապրանքաշրջանառութիւնը 2022 թուականի Յունուար-Նոյեմբերին 2021 թուականի նոյն ժամանակահատուածի համեմատ աճել է աւելի քան 90 տոկոսով եւ կազմել 4,6 միլիարդ տոլար: Ընդ որում, ներմուծումն, ըստ ապրանքների ծազման երկրների, աճել է աւելի քան 50 տոկոսով», ընդգծեց Փաշինեան:

Վարչապետը հետագայ զարգացման համար անհրաժեշտ կը համարէ շարունակել տնտեսական զարգացման ապահովման, ազգային տնտեսութիւններու մրցունակութեան բարձրացման եւ քաղաքացիներու բարեկեցութեան ուղղուած ներքին հնարաւորութիւններու եւ միջոցներու ամուր հենքի վրայ կառուցուած համակարգուած եւ հետեւողական աշխատանքը:

Հայ-Ատրպէյճանական Սահմանին ՅԱՊԿ-ի Առաքելութիւնը Կրնայ Տեղակայուիլ 1-2 Օրուայ Ընթացքին. Լաւրով

Հայաստանի եւ Ատրպէյճանի սահմանին Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան (ՀԱՊԿ) առաքելութիւն տեղակայելու առաջարկը կը մնայ արդիական: Այն կրնայ տեղակայուիլ, եթէ Երեւանը շահագրգռուած ըլլայ անով: Այս մասին յայտնած է Ռուսիոյ արտաքին գործերու նախարար Սերգէյ Լաւրով՝ Տմիթրի Քիսելեովին տուած հարցազրոյցին:

«Այն փաստը, որ ՀԱՊԿ-ը այս դժուարին իրավիճակին մէջ պատրաստեց (Հայաստանի եւ Ատրպէյճանի սահմանին) խաղաղապահ գործողութեան տեղակայման ծրագիր, կը կարծեմ, թէ շատ կարեւոր ձեռքբերում էր: Այս առաջարկը դեռ սեղանին է: Իսկ եթէ մեր հայաստանեան դաշնակիցները, ընկերները նախկինին պէս հետաքրքրուած են անով, ապա այս առաքելութիւնը կրնայ տեղակայուիլ ընդամէնը մէկ-երկու օրուայ ընթացքին», ըսած է Լաւրով:

Փաշինեան Հեռախօսազրոյց Ունեցած Է Էմանուէլ Մաքրոնի Հետ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան հեռախօսազրոյց ունեցած է Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի հետ:

Զրուցակիցները քննարկած են Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծուած մարդասիրական ծանր իրավիճակը:

Էմանուէլ Մաքրոն ընդգծած է Լաչինի միջանցքի անխափան գործունէութեան կարեւորութիւնը եւ նշած է Ֆրանսայի պատրաստակամութիւնը՝ շարունակելու նպաստել այդ խնդրի լուծման:

Զրուցակիցները միտքեր փոխանակած են Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման, ԼՂ ժողովուրդի իրաւունքներու պաշտպանութեան եւ անվտանգութեան, Հայաստանի մէջ ԵՄ քաղաքացիական առաքելութեան գործունէութեան շուրջ:

Արդարադատութեան Միջազգային Դատարանը Հեռացած Է Խորհրդակցական Սեներակ

Արդարադատութեան միջազգային դատարանը հեռացած է խորհրդակցական սենեակ՝ Հայաստան ընդդէմ Ատրպէյճանի եւ Ատրպէյճան ընդդէմ Հայաստանի գործերով որոշում կայացնելու: Այս մասին Ֆէյսպուքի մէջ գրած է միջազգային իրաւական հարցերով ՀՀ ներկայացուցիչ Եղիշէ Կիրակոսեանը՝ նշելով, որ որոշումը կայացնելէ յետոյ դատարանը զայն պիտի ընթերցէ բաց եւ առցանց հեռարձակուող նիստի ընթացքին:

Որոշումը ընթերցելու օրուան մասին դատարանը պիտի ծանուցէ կողմերուն: Համաձայն դատարանին՝ որոշումը պէտք է ընդունուի հնարաւորինս արագ: Հայաստանը Արդարադատութեան միջազգային դատարանէն պահանջած է կիրառել հետեւեւել ժամանակաւոր միջոցները՝ Ատրպէյճանը պէտք է դադարեցնէ ենթադրեալ «բողոքի շարժումներու» կազմակերպումը եւ աջակցութիւնը, որոնք կ'արգելափակեն անխափան ազատ տեղաշարժը Լաչինի միջանցքով երկու ուղղութիւններով, ապահովէ բոլոր մարդոց, փոխադրութեան միջոցներու եւ բեռներու անխափան ազատ տեղաշարժը Լաչինի միջանցքի երկայնքով երկու ուղղութիւններով, անյապաղ ամբողջութեամբ վերականգնէ եւ ձեռնպահ մնայ Լեռնային Ղարաբաղին բնական կազմի եւ այլ ծառայութիւններու մատակարարումը խափանելէ կամ խոչընդոտելէ:

Արցախի Նախագահը Հանդիպած Է Իրաւապահներուն Հետ



Արցախի Նախագահ Արայիկ Յարութեանեան աշխատանքային խորհրդակցութիւն կ'ունենայ իրաւապահ համակարգի ղեկավար կազմին հետ

Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութեանեան Փետրուար 6-ին հրաւիրած է աշխատանքային խորհրդակցութիւն իրաւապահ համակարգի ղեկավար կազմին հետ:

Քննարկուած են հանրապետութեան իրաւապահ համակարգին առջեւ ծառայած խնդիրներն ու անոնց յաղթահարման ուղղուած միջոցառումները:

Իր խօսքին մէջ երկրին ղեկավարը անդրադարձած է 2020 թուականի 44-օրեայ պատերազմէն յետոյ իրաւապահ կառուցներու գործունէութեան՝ ընդգծելով, որ անոնց արհեստավարժ աշխատանքին շնորհիւ կարճ ժամկէտի մէջ հնարաւոր եղած է երկրին ներքին կեանքը վերադարձնել բնականոն հուն: Նախագահը երախտագիտութիւն յայտնած է համակարգի բոլոր ներկայացուցիչներուն իրենց ծառայողական պարտականութիւնները բարձր պատասխանատուութեամբ կատարելու, իրաւունքի գերակայութեան սահմանադրական սկզբունքին անվերապահօրէն հետեւելու համար:

«Երբեք չմտածէք, թէ ձեր կատարած աշխատանքն աննկատ է մնում, այն գնահատում է եւ ժողովուրդը, եւ պետութիւնը», ըսած է Արայիկ Յարութեանը:

Անդրադառնալով հանրապետութեան մէջ ներքին կեանքի կայունութեան ու անվտանգութեան ապահովման ուղղութեամբ ձեռնարկուող ջանքերուն, նախագահը ընդգծած է, որ ընելիքներ դեռ

շատ կան՝ հանրային կեանքին մէջ կարգապահութեան մակարդակի բարձրացումէն մինչեւ յանցաւորութեան դէմ պայքար:

«Ընդունում եմ, որ բազմաթիւ խնդիրներ ընդամէնը արհեստածին են ու պայմանաւորուած են յաճախ նաեւ իմ լուծեամբ: Բայց վստահեցնում եմ ձեզ, բազմաթիւ հարցերում եւ իրավիճակներում պետական բարձրագոյն իշխանութեան լուծելու ոչ թէ անգործութիւն է, այլ՝ անհրաժեշտութիւն: Վերջապէս պէտք է լիարժեքօրէն ընկալենք այն իրավիճակը, որում ապրում ենք եւ հասկանանք, որ յաճախ ամէն ինչ է, որ բարձրաձայնման ենթակայ է», նշած է նախագահը:

Խորհրդակցութեան ընթացքին նախագահ Յարութեանեանը հանրութեան կողմէ ստացուած բողոքներու եւ մտահոգութիւններու հիման վրայ իրաւապահ համակարգին առջեւ դրած է շարք մը խնդիրներ:

Արցախի ղեկավարը կարեւորած է նաեւ հանրային հետաքրքրութեան կեդրոնին մշտապէս գտնուող ղէպներուն մեծ ուշադրութիւն դարձնելու անհրաժեշտութիւնը:

Խորհրդակցութեան մասնակցած են նաեւ Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Սամուէլ Շահրամանեանը, Արցախի նախագահի աշխատակազմի ղեկավար Կարէն Շահրամանեանը, պաշտօնատար այլ անձեր:

Տիգրանակերտի Հայ Երգչուհին Փլատակներուն Տակ Մնացած Է

Փետրուար 6-ին տեղի ունեցած ուժգին երկրաշարժին հետեւանքով փլատակներուն տակ մնացած են նաեւ Տիգրանակերտի մէջ ապրող հայազգի երգչուհի Ջիւլիան Տիգրիսը եւ իր ամուսինը: Այդ մասին Akunq.net-ը տեղեկացած է դարձեալ տիգրանակերտցի հայ արուեստի գործիչներէն Ուտի Երուանդի ֆէյսպուքեան գրառումէն:



Տակաւին փլատակներուն տակ գտնուող Տիգրանակերտի մէջ ապրող հայազգի երգչուհի Ջիւլիան Տիգրիս

ցած էր ՀՀ Սփիւռքի Նախարարութեան կողմէ կազմակերպուած «Արի Տուն» ծրագրին, որու ծիրին մէջ ալ 85 հայերու հետ մէկտեղ այցեւած էր Հայաստան:

Աղբիւրին համաձայն՝ Ջիւլիան Տիգրիսը եւ իր ամուսինը՝ Չաղտաշ Չանքայեան, դեռ չեն հանուած փլատակներուն տակէն: Արեւմտահայոց Հարցերու Ուսումնասիրութեան կեդրոնը յոյս չայտնած է, որ գանոնք ողջ եւ առողջ կը գտնեն եւ դուրս կը բերեն այնտեղէն:

Ջիւլիան Տիգրիսը ծնած է 1972 թուականին, Տիգրանակերտի մէջ, ուր ստացած է թէ՛ նախակրթական, թէ՛ միջնակարգ եւ թէ՛ բարձրագոյն կրթութիւնը: Ան հայկական ծագում ունի եւ մօրական, եւ հօրական կողմէ:

Հայազգի երգչուհին 2015 թուականի Օգոստոսին մասնակ-

Թուրքիոյ Երկրաշարժի Ազդեցութիւնը Գաւառի Հայութեան Կրայ



Երկուշաբթի, 6 Փետրուար, առաւօտեան ժամը 4:00ի շուրջ 7.6 ուժգնութեամբ երկրաշարժ մը տեղի ունեցաւ Թուրքիոյ Հարաւը եւ Հարաւ արեւելեան շրջաններու նահանգները: 30 երկվայրկեան տեւող երկրաշարժը սարսափի մատնած է տասնեակ մը քաղաքներ եւ հարիւրաւոր գիւղեր: Երկրաշարժը պատահեցաւ երկրի ընթերքէն 7 քիլոմետր խորութեան մէջ, կեդրոն ունենալով Գահրաման Մարաշի Փազարչը շրջանը: Նոյն պահուն բովանդակ երկրի տարածքին, ցուրտ եղանակին, անձրեւ եւ ձիւն կը տեղադր:

Մինչ այդ յետ-ցնցումներ իրար յաջորդեցին 6-6.5 բալի ուժգնութեամբ: Նախնական տրւեալներու համաձայն՝ մահացողներուն թիւը մօտ 4000 է, որոնց 900ը տեղի ունեցած է Սուրիոյ Հիւսիսը:

Արդարեւ Թուրքիոյ Հայոց պատրիարքարանը իսկոյն հետաքրքրուած է գաւառի հայաբնակ շրջաններու եկեղեցիներու եւ համայնքային կացութեան մասին: Առաջին առթիւ ստացուած տեղեկութիւնները հետեւեալներն են.

Մալաթիա - Հայ ընտանիքի մը տունը փլած է, կայ մէկ մեռեալ:

Էլազըիկ - Քաղաքի մէջ աւերուած են շէնքեր: Համայնքի անդամները թէեւ վրդոված են, սակայն անձի կորուստ չկայ:

Տիարպաքըր - Յովհաննէս Կաֆուրէն ստացուած տեղեկութեանց համաձայն եկեղեցին վնաս չէ կրած: Կան աւերուած շէնքեր:

Իսքէնտէրուն - Արժ. Տ. Աւետիս քահանայն ստացուած տեղեկութեան համաձայն քաղաքին կեդրոնը աւերներ յառաջացած են: Լատին կաթոլիկ եկեղեցին հիմնադրած կործանած է: Սրբոց Քառասուն Մանկունք եկեղեցին եւս աւեր կրած է: Անձի կորուստի մասին որեւէ տեղեկութիւն չկայ:

Վաքըֆ գիւղ - Մտահոզիչ պարագայ չկայ:

Սըվազ. - Երկրաշարժը թէեւ զգալի դարձած է, սակայն համայնքի անդամները վրդոված են: Անձի կորուստ չկայ:

Կեսարիա. - Երկրաշարժը զգալի ըլլալով հանդերձ, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին որեւէ վնաս չէ կրած:

Երկրաշարժը զգալի եղաւ Հաթայի, Կազիմիյնթապի, Ատրեամանի, Մալաթիոյ, Տիարպաքըրի, ՇանլուրՖալի եւ Գիլիսի մէջ: Մեծապէս տուժած է նաեւ Հիւսիսային Սուրիոյ կարգ մը շրջանները, մասնաւորաբար Հայկապոլիսի մէջ 4 հայեր զոհ գացած են: Իսկ տեղւոյն Կիլիկեան Կրթական հաստատութեան վերանորոգուած բաժինը կրկին քանդուած է:

Ցնցումի աշխարհագրութեան շառաւիղը՝ շատ ընդարձակ էր, հասնելով մինչեւ Կիպրոս, Պէլոպոնէս եւ Իսրայէլ: Թուրքիոյ իշխանութիւնները ահազանդ հնչեցուցին եւ «կարմիր ահազանգ» յայտարարելով, ապահովական միջոցառումներ որդեգրելու կոչեր ուղղեցին, նաեւ միջազգային տարողութեամբ օգնութիւն ակնկալելով աշխարհէն: Առաջին արձագանգը եղաւ Լիբանանէն, որուն բանակը զինուորական միաւոր մը դրկեց շտապ օգնութեան համար:

Ինչ կը վերաբերի մօտ երկու տարի առաջ վերսկսած Անգարայի եւ Երեւանի միջեւ երկխօսութեան, Միգրոյեան վերահաստատեց հայկական կողմին պատրաստակամութիւնը՝ «անկեղծօրէն ներգրաւուած ըլլալու այս գործընթացին մէջ եւ տրամաբանական աւարտին հասցնելու հարցով»:

Գերմանիոյ դիւանագիտութեան ղեկավարը իր խօսքին մէջ Հարաւային Կովկասի մէջ տիրող

կրակի զրկումը որակեց բարդ, ըսաւ որ զիտէ, որ դարաբաղեան երեսնամեայ հակամարտութեան հետեւանքով հազարաւոր զոհեր, անհետ կորսուածներ կան, խօսեցաւ նաեւ մինչ օրս ալ հակամարտութեան հետեւանքով չլուծուած խնդիրներէն ու յաւելեց, որ միամիտ չէ կարծելու, թէ այդ վէրքերը արագ կ'ամոքուին, այդուհանդերձ կը կարծէ, թէ կողմերը քայլեր կ'ընեն այդ ուղղութեամբ:

Սա արտաքին գործերու նախարարի պաշտօնին Միգրոյեանի առաջին այցն է Գերմանիոյ մայրաքաղաք, իսկ իշխանափոխութեան յետոյ Հայաստանի դիւանագիտութեան ղեկավարի երրորդը այցը Պերլին: Վերջին անգամ Հայաստանի ղեկավարութեան վարչապետ Փաշինեանը այցելած էր այդտեղ նախքան քառասունչորսօրեայ պատերազմը:

Ատրպէյճանի Հերթական Առաջարկը

պէյճանի նախարար ձեռնարկը, ռազմատենչ յայտարարութիւններն ու Լաչինի միջանցքին արգելափակումը: Միրզոյեան այս մասին խօսեցաւ գերմանացի գործընկերոջ հետ համատեղ ասուլիսին երկկողմ բանակցութիւններէն յետոյ, որուն ընթացքին, ինչպէս ինք ըսաւ, Անալեան Պերպոքի պատմած էր, թէ ինչ վտանգներու առջեւ կանգնած են Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը: Միրզոյեանը ընդգծեց, որ սա է Պաքոսի պատասխանը Արեւմուտքին, որ կը յորդորէ նախ եւ առաջ Ղարաբաղի հայերու անվտանգութեան հարցը լուծել:

«Լաչինի միջանցքի շրջափակումը, ինչպէս նաեւ դրան նախորդած այլ նախարարական գործողութիւնները, ինչպէս օրինակ՝ Հայաստանի ինքնիշխան տարածքատար պայքարի անհաջողակութեան համար անտանելի պայմանների ստեղծումը Լեռնային Ղարաբաղում ունի մէկ նպատակ՝ ստիպել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեանը լքել իրենց տները եւ, ըստ էութեան, դրանով իսկ զրկել ըստ հայրենիքում ապրելու իրաւունքից: Սա բնորոշել այլ կերպ, քան ցեղային գտնումների քաղաքականութիւն, թերեւս հնարաւոր չէ: Սա է Ատրպէյճանի պատասխանը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրաւունքների ու անվտանգութեան խնդիրը հասցէագրելու միջազգային հանրութեան կոչերուն», շեշտեց նախարար Միրզոյեան:

Գերմանիոյ արտաքին գործերու նախարարը, իր հերթին, փաստեց, որ Լաչինի միջանցքի փակման պատճառով մարդասիրական իրավիճակը «աղէտալի է»: Պերբոքը մանրամասն նկարագրեց Հայաստանը Արցախին կապող միակ ճանապարհի փակման հետեւանքները՝ բաժնուած ընտանիքներ, դեղորայքի, սնունդի պակաս, ուժաւիճակներ խափանումներ՝ կոչ ընելով Ատրպէյճանին ու Ռուսիոյ՝ անյապաղ վերացնելու շրջափակումը եւ կատարելու ստանձնած

պարտաւորութիւնները:

Իսկ ի՞նչ կրնայ ընել Եւրոմիութեան առանցքային երկիրը այդ մարդասիրական աղէտը կանխելու համար. Անալեան Պերպոքը Պաքոսին եւ Մոսկուային ուղղուած կոչէն գատ, այդ հարցով Պերլինի ընելիքներուն մասին չխօսեցաւ:

«Ազատութիւն» ռատիօկայանի այն դիտարկման, որ Եւրոմիութեան դիտորդական առաքելութիւնը իրավիճակին վերաբերեալ զեկոյց ներկայացուցած է դաշինքի անդամ երկիրներուն, ԱՄՆ, Ֆրանսա եւ այլ երկիրներ յստակ դիրքորոշում արտայայտած են, եւ Գերմանիան կրնայ է իր յստակ գնահատականը տալ առ այն, որ Ատրպէյճանը բռնագրաւած է ՀՀ ինքնիշխան տարածքը, Գերմանիոյ արտաքին գործերու նախարարը խուսափեցաւ ուղիղ պատասխանէն՝ ըսելով. «Պերլին կ'աջակցի Եւրոմիութեան յորդորելու նախագահ Շարլ Միշէլի ջանքերուն՝ ուղղուած հայ-ատրպէյճանական յարաբերութիւններու կարգաւորման»:

Գերմանիոյ կառավարութեան բարձրաստիճան պաշտօնեան նաեւ Պաքոսի հետ ուժանիւթային համագործակցութեան մասին խօսեցաւ: Փաստեց, որ ռուսական կազմէն հրաժարելու հետեւանքով այլընտրանքի փնտռումը մէջ են Եւրոպայի մէջ, եւ հաւաստիացուց որ Ատրպէյճանի հետ ուժանիւթային համագործակցութեան պարագային Գերմանիան կը խոստանայ աչք չփակել մարդու իրաւունքներու եւ այլ խախտումներու վրայ:

Միրզոյեան վերահաստատեց հայկական կողմին պատրաստակամութիւնը հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման հարցով:

Երկկողմ ասուլիսը նախարարները սկսան վերջին օրերու մէկ այլ մարդասիրական աղէտէն՝ Թուրքիոյ եւ Սուրիոյ՝ հազարաւոր կեանքեր խլած երկրաշարժներէն: Հայաստանի արտաքին գործերու նախարարը շեշտեց, որ չնայած հայ-թրքական անհարթ յարաբերութիւններուն եւ երկու երկիրներուն միջեւ առկայ խնդիրներուն՝ Երե-

Օտարերկրայ քաղաքացիները Հայաստանի Մեջ Նախորդ Տարի Գնած ԵՆ Աւելի Քան 1900 Անշարժ Գոյք

Հայաստանի մէջ նախորդ տարի անշարժ գոյքի շուկային մէջ աշխուժութիւնն նկատուած է, իրականացուած գործարքներուն թիւը աճած է, առքուվաճառքի 52 հազարէն աւելի գործարքներէն աւելի քան 4900-ի կողմ հանդիսացած են օտարերկրայ քաղաքացիներ, ընդ որում՝ օտարերկրայ քաղաքացիներէն ամենաշատ անշարժ գոյք ձեռք բերած են ռուսերը:

Նախորդ տարի աննախադէպ աշխուժութիւնն նկատուած է վարձակալութեան շուկային մէջ, Երեւանի մէջ, օրինակ, վարձակալութեան գործարքները աւելցած են մօտ 10 տոկոսով, անշարժ գոյքի գործակալութեան մէջ արձանագրած են բնակարաններու վարձակալութեան գիներու մօտ 100 տոկոս աճ, ինչ որ, սակայն, վերջին 2 ամսուան մէջ որոշակիօրէն նուազած է, օտարերկրայ վարձակալներուն մէջ մասը հեռացած է, բնակարանները կ'ազատուին:

Ըստ Կադաստրի Կոմիտէին հրատարակած տուեալներուն՝ 2022 թուականին Հայաստանի մէջ անշարժ գոյքի նկատմամբ իրականացուած է 204 հազար 910 գործարք, ինչ որ 2021-ի 201 հազար 563 գործարքի համեմատ աճած է 1.7 տոկոսով:

2022 թուականին իրականացուած է առքուվաճառքի 52 հազար 928 գործարք, ինչ որ 5.6 տոկոսով նուազած է 2021-ին արձանագրուած 56 հազար 44 գործարքին նկատմամբ: Թէեւ առքուվաճառքի գործարքները ընդհանուր առմամբ նուազած են, սակայն բնակարաններու առքուվաճառքի գործարքները 2021-ի համեմատ աւելցած են 3 տոկոսով՝ կազմելով 17 հազար

84: 4936 առքուվաճառքի գործարքի կողմ հանդիսացած են օտարերկրայ քաղաքացիները, որ կազմած է առքուվաճառքի գործարքներուն 9.3 տոկոսը:

2022 թուականին օտարերկրայ քաղաքացիները Հայաստանի մէջ գնած են 1950 միաւոր անշարժ գոյք՝ 22.9 տոկոսով աւելի 2021-ի համեմատ եւ վաճառած են 3173 միաւոր անշարժ գոյք՝ 0.6 տոկոսով աւելի 2021-ի համեմատ: Օտարերկրայ քաղաքացիները 2022-ին Հայաստանի մէջ գնած են 991 բնակարան, ինչ որ 36.9 տոկոսով աւելի է 2021-ին գնած բնակարաններուն համեմատ: Օտարերկրայ քաղաքացիները նախորդ տարի Հայաստանի մէջ գնած են 330 բնակելի տուն, 369 հող, 25 արտադրական նշանակութեան շինութիւն, 82 հասարակական նշանակութեան շինութիւն, 153 ինքնաշարժի տնակ: Այս բոլոր գործարքներուն մէջ աճ նկատուած է 2021-ի համեմատ:

Ընդ որում, օտարերկրայ քաղաքացիներէն Հայաստանի մէջ ամենաշատ անշարժ գոյք ձեռք բերած եւ վաճառած են Ռուսիոյ Դաշնութեան քաղաքացիները: Ռուս քաղաքացիները Հայաստանի մէջ 2022-ին գնած են 1207 անշարժ գոյք, ինչ որ 2021-ի համեմատ աւելցած է 44.9 տոկոսով, իսկ վաճառած են 2380 անշարժ գոյք, ինչ որ 7 տոկոսով աւելի քիչ է, քան 2021-ի վաճառուածները: Այնուհետեւ ամենաշատ թիւով գործարքներ կատարած են ԱՄՆ քաղաքացիները, գնած են 240 անշարժ գոյք, վաճառած՝ 274-ը, իրանի քաղաքացիները նախորդ տարի Հայաստանի մէջ գնած են 84 անշարժ գոյք, վաճառած՝ 67:

Ռուսաստան Կը Շարունակէ Անհանգստանալ

Շարունակուած էջ 1-էն

ման, Ռուսաստանի վրդովմունքը հասաւ իր գագաթնակետին: Ան կը յայտարարէ որ, երոպացի դիտորդներու ներկայութիւնը պիտի վնասէ Հայ-ատրպէյճանական հաշտութեան քայլերուն: Աւելին՝ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լավրով կը կարծէ որ, այդ քայլը պէտք էր համաձայնեցուէր Ատրպէյճանի հետ: Անհասկնալի է Լավրովի այս առաջարկը, երբ Եւրոպացի դիտորդները պիտի տեղակայուին Հայաստանի հողին վրայ:

Վերջերս Լավրով նաեւ յայտարարեց որ, ՀԱՊԿ-ն պատրաստ է 1-2 օրուայ ընթացքին դիտորդներ ուղարկել սահման: Հայաստանի իշխանութիւններուն դիրքորոշումը շատ յստակ է: ՀԱՊԿ նախ պէտք է գնահատական տայ Ատրպէյճանի քայլերուն՝ նախ ընդունելով Հայաստանի միջազգայնօրէն ճանաչուած սահմանները: Եթէ անոնք պիտի ըսեն որ, ՀայկԱտրպէյճանական սահմանը ճշդուած չէ, այդ պարագային ԵԱՀԿ դիտորդները ընելիք չունին: Նոր յարձակումի պարագային անոնք կրնան ետք քաշուիլ իրենց դիրքերէն՝ Հայաստանը դարձեալ ձգելով անպաշտպան:

Այստեղ պէտք է յիշել նաեւ որ, անցեալ տարի Մոսկուան աղմուկ բարձրացուց՝ ըսելով որ Հայաստան

տան ընդունած է հաշտութեան Ամերիկեան ծրագիրը: Որուն երեւան պատասխանց, որ կ'ընդունի Ռուսաստանի ծրագիրը, սակայն ամիսներ անց Մոսկուա չկարողացաւ համոզել Ատրպէյճանական կողմը՝ իր առաջարկներուն նկատմամբ:

Այս բոլորին յաջորդեց Լաչինի միջանցքի փակումը՝ 120 արցախցիները զրկելով իրենց ազատ տեղաշարժի իրաւունքէն: Երկու ամիս անցած է ճանապարհի փակումէն, սակայն Ռուս խաղաղապահները քայլեր չեն ձեռնարկեր ճամբան բանալու համար:

Այս է Հայ-ռուսական յարաբերութիւններու վերջին տարիներու պատկերը: Անցած են այն օրերը երբ Հայաստան իր քայլերը կը համադրէր Մոսկուա հետ ու կը փորձէր հաճոյանալ ռազմական դաշնակիցին՝ խորհելով որ ան օգնութեան պիտի հասնի հայ ժողովուրդի: Սակայն, ըստ երեւոյթին Փութին թուրքոյի ու Ատրպէյճանի հետ իր յարաբերութիւնները աւելի գերակայ կը նկատէ, Հայաստանը չձգելով այլ ելք՝ ապաւինելու այլ դաշնակիցներու:

Պետութիւններ կ'առաջնորդուին իրենց ազգային շահերով: Ներկայիս Հայաստան այդ առումով այժմ կը գտնուի ճիշդ ուղղութեան վրայ:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

«Եւրոտեսիլ 2023»-ին Հայաստանի Պատուիրակն Է Պրիւնեթը



Հայաստանը այս տարի «Եւրոտեսիլ»-ին ընթացքին պիտի ներկայացնէ երգչուհի Պրիւնեթը: Որոշումը կայացուած է Հանրային հեռուստաընկերութեան կատարած ներքին ընտրութեան ճամբով:

Պրիւնեթը հանրութեանը յայտնի է քանի մը հիթային երգերով եւ կը պատրաստուի նոր շունչ բերելու եւրոտեսիլեան մեծ բեմ: «Ուրախ եմ ձեզ հետ կիսուել այս նորութեամբ: Ես պարզապէս երաժշտութիւն եմ ստեղծում, որով այս անգամ կիսուելու եմ եւրոպական լսարանի հետ», կը նշէ «Եւրոտեսիլ 2023»-ին Հայաստանի պատուիրակը:

Պրիւնեթը երգել սկսած է 4 տարեկանին, իսկ կը ստեղծագործէ 15 տարեկանին: Իր բոլոր երգերուն երաժշտութեան եւ բառերուն հեղինակը ինքն է: Պրիւնեթի «Գիշեր», «Smoke Break», «Բաց կապոյտ աչքերը» երգերը կարճ ժամանակի մէջ հիթ դարձած են եւ միլիոնաւոր դիտումներ արձանագրած են «Youtube»-ի մէջ:

Հանրային հեռուստաընկերութեան գործադիր տնօրէն Յովհաննէս Մովսիսեան կը կարեւորէ նման մրցոյթներու մէջ Հայաստանը ներկայացնելու հնարաւորութիւնը երի-

տասարդ եւ տաղանդաւոր արուեստագէտներուն վստահելը. «Նախորդ տարի «Եւրոտեսիլ» նորայայտ արուեստագէտ ուղարկելու փորձն արդարացուեց. մինչեւ այժմ մրցութային երգը շարունակուած է մեծ յաջողութիւններ գրանցել ու գերել միլիոնաւոր երկրպագուներին սրտէր: Յոյսով եմ՝ այս տարի եւս կը գործացնենք եւրոպացի հանդիսատեսին ինքնատիպ հայ արուեստագէտով»:

«Երեւանում «Մանկական Եւրոտեսիլ»-ի կազմակերպումից մի քանի շաբաթ անց մենք արդէն սկսեցինք մայիսին կայանալիք մրցոյթի մեր պատուիրակին ընտրելու գործընթացը: Այս փուլում արդէն աշխատում ենք երգի եւ տեսահոլովակի վրայ, որը, վստահ եմ, շատ տպաւորիչ է լինելու», կ'ըսէ «Եւրոտեսիլ»-ի հայաստանեան պատուիրակութեան ղեկավար Դաւիթ Ծերունեանը:

«Եւրոտեսիլ 2023» երգի մրցոյթը այս տարի տեղի պիտի ունենայ Լիվըրպոլի մէջ. կիսաւարտականները պիտի կայանան Մայիսի 9-ին եւ 11-ին, իսկ ւարտական՝ Մայիսի 13-ին: Պրիւնեթը ելոյթ պիտի ունենայ երկրորդ կիսաւարտականի առաջին բաժնին մէջ:

Հայաստան Պատրաստ Է Օգնութիւն Տրամադրելու

Շարունակուած էջ 1-էն

փոյթ ապաքինում: Հայաստանը պատրաստ է օգնութիւն տրամադրել», այս մասին վարչապետ Փաշինեան գրած է թուիթթրեան իր էջով:

Նախնական տուեալներով Հալեպի մէջ զոհուած են չորս հայեր, իսկ թուրքոյ մէջ՝ երկու:

Երկրաշարժէն տուժած է Հալեպի կիլիկեան երկրորդական վարժարանը՝ կրելով նիւթական վնասներ:

Ֆրանսիացի միջնորդ Ժաբ Բլոթը զգուշացնում է. «Նախկինում կողմերը հակուած էին խաղալ միջնորդ երկրների տարածաշրջաններին վրայ՝ նրանք հանելով մէկը միւսի դէմ, սակայն հիմա համախաղաղութեանը միասնական են»:

Ռուսաստանի դեսպանը եւս հաւաստում է. «Ժամանակն է հասնել համաձայնութեան»:

Միացեալ Նահանգների, Ռուսաստանի ու Ֆրանսիայի առաջնորդները, իրենց հերթին, այդ օրերին Դենվերում՝ «Մեծ ութնեակի» գագաթնաժողովում, առաջին համատեղ յայտարարութիւնն են ընդունում Լեւոնային Ղարաբաղի վերաբերեալ:

«Զինադադարն ինքնին բաւարար չէ: Միջազգային հանրութիւնը յորդորում է հասնել վերջնական կարգաւորման, եւ մենք համոզուած ենք, որ տարածաշրջանում կայուն եւ տեւական խաղաղութեան հաստատումը չպէտք է ձգձգուի», յայտարարել էին Ելցինը, Քլինթոնը եւ Շիրակը:

Չնայած եռանախաղաղութեան

աննախադէպ այս ջանքերին ու միասնութեանը՝ տեղում բանակցութիւնները առաջ չեն գնում:

«Կարծում եմ՝ մենք պէտք է գործի անցնենք, քանի որ եթէ չանենք, մեզ խրատուլակի տեղ կը դնեն», Դենվերում հանդիպելով պետքարտուղար Օլբրայթին՝ ասում է Ռուսաստանի արտգործնախարարը՝ առաջարկելով կիրառել սպառնալիքներ ու պատժամիջոցներ. «Մենք պէտք է ասամ ցոյց տանք: Դուք՝ ամերիկացիները, կարող էք ինչ որ բան անել ազդերի ներքին հետ՝ որպէս լծակ օգտագործելով նաւթը: Կարող էք ասել, որ եթէ գործը գլուխ չգա, չէք քաջալերի ձեր ընկերութիւններին օգնել Ադրբեջանին նաւթի արդիւնահանման հարցում: Ինչ վերաբերում է Հայաստանին, մենք գէշքը կ'օգտագործենք որպէս լծակ, այլ կերպ ասած՝ Ռուսաստանը կարող է սպառնալ Հայաստանին, թէ գէշք չի տայ, իսկ դուք կարող էք նաւթի գործօնն առաջ տանել»:

Չնայած այս զգուշացումներին՝ Ստեփանակերտն ու Բաքուն կտրականապէս մերժում են փաթեթային տարբերակը: Մօտ երկու ամսից համախաղաղութեանը ներկայացնում են նոր՝ փուլային պլանը, որի հիմքում շարունակում են մնալ միեւնոյն սկզբունքները, բայց ընտրուած է իրականացման, այսպէս ասած, երկարաձգուած տարբերակը: Մասնաւորապէս, եթէ առաջինը՝ փաթեթայինը, ենթադրում էր, որ տարածքների վերադարձն ու կարգավիճակի որոշումը պէտք է լինեն միաժամանակ, ապա հիմա միջնորդները առաջարկում են նախ ազատագրել տարածքները, վերադարձնել փախստականներին, ապահովել Ղարաբաղի անվտանգութիւնն ու ինքնակառավարումը, ապա՝ անդրադառնալ Ադրբեջանի տարածքային ամբողջականութեան ու Ղարաբաղի կարգավիճակի հարցերին:

Համախաղաղութեան հետեւողական այս ջանքերի ֆոնին՝ Հայաստանի նախագահը Սեպտեմբերին ասուլիս է հրաւիրում եւ արձանագրում, թէ որքան վտանգաւոր է հայկական կողմի համար դէմ գնալ միջազգային հանրութեան կամքին. «Ի՞նչ է, միջազգային հանրութիւնը թոյլ է տալու, որ 20 կամ 30 տարի պահպանուի՞ այս վիճակը: Դա բացառուած է, եւ միջազգային հանրութիւնը կը գտնի ձեւեր, միջոցներ՝ այնքան խեղճացնելու մեզ, որ ոչ միայն չկարողանանք ձեռք բերել այն, ինչ որ այսօր կարող ենք ձեռք բերել փոխգիշումների ճանապարհով, այլև շատ աւելի վատ վիճակի մէջ ընկնել»:

Տէր Պետրոսեանի ասուլիսից երեք օր անց Ռուսաստանի արտգործնախարար Պրիմակովը հանդիպում է ԱՄՆ փոխպետքարտուղարին ու զգուշացնում՝ Տէր Պետրոսեանը լուրջ քննադատութեան թիրախում է յայտնուել խիզախ դիրքորոշման համար, եւ նրան պէտք է աջակցել: Տարածաշրջանին քաջածանօթ Պրիմակովն ընդգծում է՝ «Վաղ թէ ուշ անհրաժեշտ է լինելու ճշում բանեցնել Լեւոնային Ղարաբաղի վրայ»:

Միջնորդները սկսում են քննարկել՝ ինչպէս համոզել Ստե-

Ինչ էին Բանակցում, Եւ Ինչ էր Պահանջում Միջազգային Համայնքը

Շարունակուած էջ 11-էն

փանակերտին: Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը Հոկտեմբերին, Ստրասբուրգում հանդիպելով Հայաստանի նախագահին, առաջարկում է վարչապետ դարձած Քոչարեանին ու միւս ազդեցիկ դարաբաղցիներին հրաւիրել Փարիզ:

«Նպատակն է ճնշել, որ նրանք համաձայնութեան գան: Յետոյ Քոչարեանը կարող է հրաւիրուել Մոսկուա, ապա՝ Նիւ Եորք, որտեղ եւս նրան միեւնոյն բանը կ'ասուի», ըստ Պետդեպի գաղտնագերծած փաստաթղթերի՝ առաջարկել է Ֆրանսիայի փոխարտգործնախարարը ԱՄՆ փոխպետարտուղարին:

Գաղափարը, սակայն, որեւէ արդիւնք չի տալիս: Քոչարեանի այցից յետոյ Ֆրանսիայի փոխարտգործնախարարը գաղտնի հեռագրով փոխանցում է վաշինգտոն. «Մեզ չյաջողուեց որեւէ իրական փոփոխութեան հասնել Քոչարեանի դիրքորոշումներում, եւ մենք բանակցութիւնների սկսման որեւէ իրական հեռանկար չենք տեսնում»:

լուրջ երկրների ներկայացուցիչներ, դա ինչ-որ արդիւնք կ'ունենայ: Դա ցոյց կը տայ, որ ընդդիմանալով խաղաղ կարգաւորմանը՝ նրանք դէմ են գնում ողջ աշխարհի կամքին», գաղտնի հեռագրի համաձայն, ասել է Ռուսաստանի արտգործնախարարը փոխպետարտուղարին:

Թալբոթը համաձայնում է՝ անհրաժեշտ է աջակցել Տէր Պետրոսեանին, ընդունում է, որ նրա ու Քոչարեանի միջեւ իրական պայքար է սկսուել: Միաժամանակ, հրաժարուած է մեկնել Ստեփանակերտ ու Պրիմակովին ցնցող մանրամասներ պատմում միջնորդներին՝ Ղարաբաղ կատարած վերջին այցի վերաբերեալ:

«Վերջին անգամ Արկադի Ղուկասեանը մեզ՝ համախաղաչներին համեմատեց ստալինեան բռնաճնշումների ժամանակ գործող տիրահաչաչ Troika-ների հետ, մեղադրեց մեզ Ղարաբաղի հայերի բնաջնջումը կազմակերպելու մէջ: Ես չեմ շտապում եւս մէկ անգամ նման ընդունելութեան արժանանալ», խոստովանում է ԱՄՆ փոխպետարտուղարը:

With regard to Nagorno-Karabakh, the Conference Co-Chairs will meet in Paris in early February. You should send Boris Pastukhov there armed with all of the arguments you can muster for having the Co-Chairs visit Stepanakert. I am ready to go back, but only if I am convinced it will do some good. Perhaps Pastukhov did not report to you all the details of our last visit when Ghoukasian compared the co-chairs to the notorious "troikas" during Stalin's purges and accused of us of plotting the elimination of the N-K Armenians. I'm in no great hurry to be treated to another reception like that. We agree that we've got to support Ter-Petrosian. We understand that there is a real struggle going on between Ter-Petrosian and Kocharian right now.

YMP: Yes, I can tell you that Kocharian wants to be President of Armenia. Look, the N-K Armenians are an obstacle. Let's not beat around the bush about that. But what can we do? We have to face it and overcome it. I have been for a package agreement all along. Stepanakert was against it. Then we I proposed a step-by-step approach both Baku and Stepanakert were opposed.

Փորձելով բացատրել միջազգային համայնքին կտրուկ մերժելու այդ ֆենոմենը՝ միջնորդներն անգամ ենթադրում են, թէ գուցէ Տէր Պետրոսեանն ու Քոչարեանը համաձայնեցուած խաղ են խաղում. մէկը մերժում է միջնորդներին, միւսը՝ յայտարարում, թէ պատրաստ է փոխզիջումներին:

Մինչդեռ, իրականում ամէն ինչ աւելի քան լուրջ էր. Երեւանում ներիշխանական պայքարը խորանում էր ժամ առ ժամ: Առաջինը, ըստ դիւանագիտական գաղտնի հեռագրերի, այդ մասին կռահում է Ռուսաստանի արտգործնախարար Եւգենի Պրիմակովը:

Տէր Պետրոսեանի հրաժարականից դեռ մէկ ամիս առաջ՝ Յունուարին, Շուէդիայում հանդիպելով ԱՄՆ փոխպետարտուղար Սթրոբ Թալբոթին՝ Պրիմակովն ասում է. «Քոչարեանն ուզում է դառնալ Հայաստանի նախագահ: Ղարաբաղի հայերը խոչընդոտ են, եկէք ի գուր այս հարցի շուրջ ջուր չձեծենք, փոխարէնը քննարկենք՝ ինչ կարող ենք անել»:

Պրիմակովն առաջարկում է խստացնել ճնշումները Ղարաբաղի իշխանութիւնների նկատմամբ ու շտապ կարգով այնտեղ դիւանագիտական դեսանտ իջեցնել:

«Եթէ Մինսկի խմբի միջնորդները մեկնեն Ստեփանակերտ՝ որպէս, այսպէս ասած, երեք շաբ

Դիւանագէտները որոշում են մի քանի օրից կրկին հանդիպել Փարիզում: Մինչ այդ՝ Պրիմակով-Թալբոթ այս գրոցից երկու շաբաթ անց, Տէր Պետրոսեանը հրաժարական է տալիս:

«Ձերձ եմ մնում որեւէ մեկնաբանութիւնից կամ գնահատականից՝ իրադրութիւնը չսրելու նպատակով: Միայն հարկ եմ համարում նշել, որ իշխանութեան ճգնաժամում Արցախի հարցի արժարժումն ընդամենը պատրուակ էր: Խնդիրը շատ աւելի խորն է եւ կապուած պետականութեան հիմնադրոյթների, խաղաղութեան ու պատերազմի այլընտրանքի հետ: Իսկ կեանքը ցոյց կը տայ, թէ ով ինչ է արել Արցախի համար, եւ ով է իրականում ծախում այն», իր խօսքում նշում է առաջին նախագահը:

Այդ օրերին սեղանին դրուած տարբերակն առաջարկում էր դուրս բերել հայկական ուժերը գրաւեալ տարածքներից՝ բացառութեամբ Լաչինի, կողմերի միջեւ ստեղծել բաժանարար գիծ՝ բուֆերային գոտի, որն ամբողջութեամբ պէտք է մնար չբնակեցուած եւ ԵԱՀԿ ուժերի հսկողութեան տակ: Լաչինի միջանցքը պէտք է լինէր ոչ թէ այսօրուայ պէս՝ 5, այլ՝ 22 կմ, եւ Ադրբեյջանը այն պէտք է վարձակալութեան տար ԵԱՀԿին, որն իր հերթին պէտք է օգտագործման յանձնէր Արցախի իշխանութիւններին:

Լեռնային Ղարաբաղը պէտք

է ունենար իր սեփական դրօշը, գինանշանը, օրհներգը եւ Սահմանադրութիւնը: Քաղաքացիները կարող էին գինուորական ծառայութիւնն անցնել Ղարաբաղի տարածքում, իսկ Ադրբեյջանի բանակը, անվտանգութեան ուժերը եւ ոստիկանութիւնը իրաւունք չէին ունենալու մտնել Լեռնային Ղարաբաղ առանց տեղական իշխանութիւնների թոյլտուութեան: Ստեփանակերտը նաեւ իրաւունք էր ստանում արտաքին կապեր հաստատել օտարերկրեայ պետութիւնների եւ միջազգային կազմակերպութիւնների հետ տնտեսութեան, գիտութեան, մշակույթի, սպորտի եւ մարզասիրական հարցերի ոլորտներում: Այս քայլերից յետոյ արդէն՝ յաջորդ փուլում, առաջարկում էր անցնել կարգավիճակի յստակեցմանը: Մինչ այդ միջազգային համայնքը խոստանում էր խաղաղապահ ուժեր տեղակայել՝ դառնալով անվտանգութեան երաշխաւոր:

Դիւանագիտական փաստաթղթերը վկայում են, որ հարցի շուրջ դուրսի բանակցութիւններում միջնորդները շարունակ ընդգծել են՝ սա լաւագոյնն է, որ անցել է իրենց մտքով, եւ լաւագոյնը, որ իրենք կարող են առաջարկել կողմերին: Զուգահեռ, գերտերութիւնները գուրջացնում էին հայկական կողմին՝ չգնալով լուծման՝ Հայաստանը կորցնում է զարգացման ու բարգաւաճման հնարաւորութիւնները:

«Ժամանակը աշխատում է Երեւանի դէմ. մինչ Ադրբեյջանը հարստանում է, Հայաստանը գտնուում է լճացման մէջ», ըստ Մոսկուայից վաշինգտոն ուղարկուած դիւանագիտական հեռագրի՝ 97ին ասել էր Պրիմակովը:

«1997ը գազամուղների ու տրանսպորտային գծերի հար-

ցով որոշում կայացնելու տարի է: Եթէ հայկական կողմը չկարողանայ մասնակցել տարածաշրջանային զարգացումներին, դա թանկ կը նստի Հայաստանի վրայ, ինչը որեւէ մէկի շահերից չի բխում», դրանից ամիսներ առաջ գգուշացրել էր Ամերիկայի յատուկ յանձնարարութիւններով դեսպան Զէյմս Քոլինզը Հայաստանի արտգործնախարարին:

Փոխպետարտուղար Սթրոբ Թալբոթն էլ ընդգծել էր՝ Հայաստանի մասնակցութիւնը էներգետիկ ծրագրերին ու տարածաշրջանային նախագծերին կախուած է զարաբաղեան խնդրի կարգաւորումից:

«Նախագահ Քլինթոնի համոզմամբ, անհրաժեշտ է Հայաստանը մասնակցի դարձնել տարածաշրջանում սպասուող տնտեսական աճին», դիւանագիտական փաստաթղթերից մէկի համաձայն՝ ասել էր Սթրոբ Թալբոթը: Բարձրաստիճան դիւանագէտը խօսել էր «Նախիրիտ»ի վերագործարկման հնարաւորութեան մասին ու միաժամանակ գուրջացրել. «Սա ցոյց է տալիս, թէ ինչ ծրագրեր են տապալուում հակամարտութեան պատճառով: Որեւէ բան տեղի չի ունենայ առանց խաղաղութեան»:

Առաջին նախագահի հրաժարականից յետոյ՝ աւելի քան երկու տասնամեակ, Հայաստանի բոլոր երեք առաջնորդները որդեգրեցին ստատուս քուոն պահելու քաղաքականութիւնը: Բոլոր երեքն իրենց իշխանութեան տարբեր փուլերում Տէր Պետրոսեանին մեղադրեցին պարտուողականութեան ու դաւաճանութեան մէջ:

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ»
3 Փետրուար 2023

FREE ADMISSION SUPER BOWL WATCH PARTY

SUNDAY FEBRUARY 12 12:00 PM

1060 N. ALLEN AVE PASADENA CA

Հրանդ Տինք՝ Նորարար Մտածողութեան Մարդը

Փետրուար 5-ին Պելլսահայ Միութեան սրահէն ներս նշուեցաւ «Ակօսի» խմբագիր Հրանդ Տինքի սպանութեան 16-րդ տարելիցը:

Օրուայ բանախօսներէն էր «Մասիս» շաբաթաթերթի խբագրական կազմի անդամ Յարութ Տեր Դաւիթեանը:

Միջոցառման մանրամասնութիւններուն կ'անդրադառնաք մեր յաջորդ թիւերուն մէջ: Մինչ այդ կը ներկայացնենք Յարութ Տեր Դաւիթեանի ելոյթը ամբողջութեամբ: ԽՍԲ.



ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱՎԻԹԵԱՆ

Մարդ անհատին ուղեղը եւ մտածելու կարողութիւնը հրաշալի երեւոյթ մըն է: Մարդ կայ, որ տուեալ կացութեան մը մէջ կ'անձրկի եւ կը յուսահատի: Մարդ ալ կայ, որ այդ նոյն կացութեան մէջ գոնտուելով, հիանալի գաղափարներ կ'ունենայ եւ գլխիվայր շրջելով իրավիճակը, մեծ յաջողութիւններ կ'արձանագրէ: Ուրեմն, մարդուս մտածելու կարողութիւնէն կախեալ է, որ ի՞նչ պիտի կեանք մը կ'ապրի եւ ի՞նչ աւանդ կը թողու:

Միլիոնաւոր թուրքեր ամէն առաւօտ կը կրկնէին լողունգ մը՝ «Ես թուրք եմ, շիտակ եմ, աշխատասէր եմ, պարտականութիւնս է փոքրերը պաշտպանել եւ մեծերը յարգել, հայրենիքս ու ազգս անձէս աւելի սիրել, ամենէն մեծ ցանկութիւնս է բարձրանալ եւ յառաջդիմել ու իմ գոյութիւնը թուրք գոյութեան նուէր թող ըլլայ»: «Հրանդ Տինք գատուեցաւ անոնցմէ, բացաքանչեւով՝ «Ես թուրք չեմ, թուրքիայէն եմ եւ հայ եմ»: Կրնա՞ք երեւակայել, որ ինչ մեծ հետեւանքներ ու արձագանք կրնար ունենալ այս պարզ երեւացող, բայց շատ խորունկ մտածելակերպը: 85 միլիոնանոց թուրքիոյ բնակչութեան առնուազն 25-30 միլիոնը թուրք չեն, եւ եթէ ասոնք Հրանդ Տինքի նման սկսէին մտածել եւ գործել, կրնա՞ք երեւակայել որ ինչէր կրնային ըլլալ հետեւանքները: Հետաքրքրական է, որ երբ էրտողան իշխանութեան տիրացաւ, վերջ դրաւ այս ամենօրեայ արարողութեան:

Ահա այսպիսի մտածելակերպի մարդ էր Հրանդ Տինք: Դժբախտաբար իր նմանները հեշտութեամբ չեն հասկցուիր իրենց շրջապատին կողմէ եւ նոյնիսկ սխալ ալ կը հասկցուին: Ու ժամանակ պէտք է անցնի, որ այսպիսիներուն մեծութիւնը հասկնալի դառնայ ընդհանուր ժողովուրդին: Դժբախտաբար նաեւ, այս հասկացողութիւնը կը պատահի անոնց մահէն ետք միայն: Այս մտածելակերպի մարդիկ շատ լաւ կը գիտակցին այս իրականութեան, բայց չեն շեղիր իրենց ընթացքէն, Պարոյր Սեւակի նման յայտարարելով՝ «Յանուն վաղուան ճշմարտութեան, թող որ այսօր լինեմ սխալ»:

Հրանդ Տինք իր կենդանութեան դժբախտաբար չհասկցուե-

ցաւ շատ մը հայերու կողմէ: Հեզնականը հոն է, որ ան շատ լաւ հասկցուեցաւ թուրք ղեկավարութեան կողմէ, որ զինքը մեծ վտանգ նկատելով, վերացուցին:

Մինչ շատ մը հայեր կ'աշխատէին մէկուսացնել թուրքիան, ինք պատգամեց՝ փոխանակ աշխատելու ի նպաստ թուրքիոյ մեկուսացման, մենք պէտք է աշխատինք, որ թուրքիան Եւրոպական Միութիւն մտնէ: Եթէ այդ պատահի, թուրքիոյ մէջի հայ ժողովուրդի թիւը կրնայ 2-3 միլիոնով աւելնալ (թրքացած հայերու հայութեան վերադարձով):

Մինչ շատ մը հայեր համաձայն չէին թուրքիոյ ժողովրդավարացման, ան պատգամեց՝ թուրքիան այսօր ինքնութեան հարց ունի: Մենք պէտք է քաջալերենք այս հարցի ազատ քննարկումը ժողովրդային լայն խաւերու կողմէ, ժողովրդավար միջոցառումներով: Թուրքիոյ ժողովրդավար դառնալը մեզի նպաստաւոր է:

Մինչ շատ մը հայեր կ'աշխատէին հայերու ցեղասպանութիւնը ուրացողները պատժամիջոցներու ենթարկելու, ան պատգամեց՝ ես դէմ եմ այդ գծով Ֆրանսայի Խորհրդարանի որոշումին: Ոեւէ մէկուն բերանը փակելով յառաջ չենք երթար, այլ՝ երկխօսութեամբ:

Ան նաեւ պատգամեց՝
-Էական գործը ժողովուրդներու միջեւ պիտի ըլլայ եւ ոչ թէ կառավարական կամ պետական մարմիններու: Հիմնական փոփոխութիւնները միշտ ալ վարեն վեր կ'ըլլան եւ ոչ թէ վերեն վար:

-Պատմութենէն դաս պէտք է քաղել: Հայը պէտք է իր դատը խաղաքարտ դարձնէ այս կամ այն պետութեան ձեռքին:

-Ցեղասպանութեան ճանաչում պէտք է մուրալ, այլ՝ պահանջել: Եւրոպան քաջածանօթ է թէ հայերուն ի՞նչ պատահեցաւ համաշխարհային առաջին պատերազմի ընթացքին:

-Սփիւռքը չի՛ կրնար մէկ մարմին դառնալ: Պէտք է դառնայ: Բայց կրնայ աշխատիլ մէկ նպատակի իրգործման համար՝ Հայաստանի Եւրոպական Միութեան անդամակցութեան համար: Ըստ ինձի, այս պէտք է ըլլայ մեր առաջնահերթ գործը:

-Մինչեւ Հայաստանի անկախացումը, հայուն սիրտն ու զգացական մօտեցումները հայապահ-

պանման նեցուկ հանդիսացան: Անկախացումէն ետք, պետական մտածողութիւնը պէտք է փոխարինէ զգացական մօտեցումները:

Իր այս պատգամները մենք գրի առինք երբ իր Լոս Անջելոս այցելութեան առթիւ, Նոյեմբեր 4, 2006-ին, 5 հոգիով հանդիպում ունեցանք Նոր Սերունդ Մշակութային Միութեան գրասենեակին մէջ, լուսահոգի էտփին Մինասեանի ներկայութեան: Մինչ այդ, ան հանդիպումներ ունեցած էր այլ կազմակերպութիւններու հետ: Աւելի քան մէկ ժամ տեւած այդ հանդիպման աւարտին, ան ըսաւ, որ միայն մեզի հետ հարց չէր ունեցած, որովհետեւ կրցած էինք զիրար լաւ հասկնալ: Այդ հանդիպման ընթացքին, երբ իրեն ըսի, որ պէտք է՞՞ զգոյշ ըլլայ, որ իր արտայայտած գաղափարները, մանաւանդ այն մէկը, որ «Թուրքիան ինքնութեան հարց ունի եւ մենք պէտք է քաջալերենք այս հարցի ազատ քննարկումը ժողովրդային լայն խաւերու կողմէ», վտանգաւոր հետեւանքներ կրնան ունենալ իր անձին համար, ան անդրդուելի մնաց: Իր մեկնումէն ետք, ընկերներս զարմանք յայտնեցին իր քաջութեան եւ անվախութեան վրայ, հակառակ իր ստացած բազում սպառնալիքներուն: Իրենց ըսի, որ Հրանդ Տինք գորաւոր սկզբունքներու եւ հաստատ համոզումի տէր անձ մը ըլլալով, այլ կերպ պիտի չկրնար շարժիլ, որովհետեւ այդ պիտի նշանակէր գործել հակառակ իր մտածելակերպին ու համոզումներուն: Որ նաեւ պիտի նշանակէր, որ պիտի նահանջէր իր կեանքի նպատակէն ու պարպուէր իր բուն էութիւնէն: Մեր այդ հանդիպումէն երկու ամիս չանցած, Յունուար 19, 2007-ին Հրանդ Տինք կը նահատակուէր, յանուն իր մտածելակեր-

պին ու գաղափարներուն:

Իմաստալից ու իմացեալ կեանք մը ապրիլ որոշած մարդը, վսեմ առաքելութեան մը լծուած մարդը, համոզումի տէր քաջ մարդը, մէկ խօսքով՝ առաջնորդ մարդը, չանսար առօրեայ հոգսերու եւ պարտանդրանքներու լուծին, սպառնալիքներու եւ նոյնիսկ մահուան տեսիլքին, որոնք կրնան կաշկանդել իր առաքելութիւնը գլուխ հանելու իր ազատութիւնը: Ընդհակառակը, ամէն տեսակի սպառնալիքները կը հանդիսանան պակաղաղում իր դաւանած հաւատամքի ճշմարտացիութեան: Իր համոզումները, գաղափարները, դաւանանքը, այնքան վսեմ են, որ սակարկութեան առարկայ չեն կրնար ըլլալ, որպէսզի չվնասուի անոնց արժէքն ու վսեմութիւնը: Պարզ մահահանացուն չի՛ կրնար անմիջապէս մտնել անմահի մտքին մէջ եւ անմահն ալ չի՛ կրնար զիջիլ իր վսեմութիւնէն, ինչ ալ ըլլան պարագաները: Ուրեմն պէտք է ապաւինիլ ժամանակի թաւալքին, կարենալ մտնելու համար անմահներու մտքին մէջ ու կարենալ լաւագոյնս հասկնալ զանոնք:

Հրանդ Տինք հերոս առաջնորդ մըն էր, որ մտածողութեան նոր դաշտ մը բացաւ մեր առջեւ: Դժբախտաբար, հերոսներու աշխարհիկ կեանքը ընդհանրապէս կ'ունենայ ողբերգական վերջաւորութիւն: Բայց այդ իրականութիւնը երբէք արգելք չըլլար, որ անոնք մինչեւ վերջ շարունակեն իրենց գործունէութիւնը, մեկնած իրենց համոզումէն, որ պատրաստ են նուիրաբերել իրենց կեանքը աւելի վեհ եւ արժեքաւոր նպատակի համար: Որովհետեւ անոնք նաեւ կը հաւատան, որ իրենց զոհաբերութիւնը եւ թողած աւանդը պիտի նպաստէ նոր հերոսներու ծնունդին:

AGBU

SAVE THE DATE

GALA HONORING

Dr. Ardem Patapoutian

NOBEL PRIZE LAUREATE

Special Entertainment by
Guy Manoukian

Proceeds to Benefit Humanitarian Relief in Artsakh & Lebanon

Saturday, April 15, 2023 | 7:00 PM

Beverly Wilshire Hotel | Beverly Hills

Չարչարանաց ճանապարհներով Անցած Լուսարար-Ուխտաւորը



ՅԱԿՈՒ ՍՐԱՊԵԱՆ

Հայ տպագրական գործը դարերի պատմութիւն ունի, պատմութիւն, որի էջերում անխամբելի տառերով է գրուած գրահրատարակիչ, լեզուաբան, մշակութային գործիչ, արքեպիսկոպոս Ոսկան Ղլիջենցու, նոյն իր՝ Ոսկան Երեւանցու անունը:

1614 թ. Իրանի Նոր Ջուղայում է ծնուել Ոսկան Երեւանցին, սովորել տեղի ծխատէր քահանայի մօտ, ապա յաճախել Խաչատուր Կեսարացու Ամենափրկիչ վանքի դպրոց, Երեւանում աշակերտել Մելիքանի վճիռագրին: 1634-ին Փիլիպոս Ա. Աղբակցի կաթողիկոսի հրահրով Նոր Ջուղայից եկել է էջմիածին, Ուշիի Սբ. Սարգիս վանքում նշանակուել վանահայր: Մայր Աթոռում ծանօթացել է Դոմինիկեան վանական, գիտնական Պաուլո Պիրոմալլիի հետ, որը Հայաստան էր եկել Աստուածաշնչի հայերէն բնագիրը լատիներէն վերագատային յարմարեցնելու յանձնարարութեամբ: Ոսկան Երեւանցին նրանից էր սովորելու լատիներէն, փիլիսոփայութիւն, երկրաչափութիւն, աստղաբաշխութիւն, քերականութիւն, լատիներէնի փոխադրելու քերականութեան մի դասագիրք, ապա յարմարեցնելու գրաբարին, լատիներէնից կատարելու

մի շարք թարգմանութիւններ:

Ոսկան Երեւանցին, իր հետ ունենալով Յակոբ Դ. Ջուղայեցու յանձնարարականը, 1662-ին մեկնում է Եւրոպա՝ Աստուածաշունչը հայերէն հրատարակելու: Նախ գնում է Լիվոնո, ապա՝ Հոռոմ, որտեղ ջանում է վատիկանից ստանալ Հոռոմում կամ Իտալիայի որեւէ այլ քաղաքում Սուրբ գիրքը տպագրելու թոյլտուութիւն: Սակայն՝ ապարդիւն: Հետամուտ իր նպատակին՝ մեկնում է Ամստերդամ, 1664-ին ստանձնում Ամստերդամի Սբ. էջմիածնի եւ Սբ. Սարգիս անուան տպարանի, որը 1660-ին հիմնել էր Մատթէոս Ծարենցին, տնօրինութիւնն ու ձեռնարկում Աստուածաշնչի տպագրութեան նախապատրաստական աշխատանքները: Փորագրիչներին պատուիրում է նոտրգիր, նոր տեսակի գլխատառեր եւ թուղթեր, բնագիրը պատրաստել տպագրութեան եւ իր աշակերտներ կարապետ Անդրիանացու եւ Օհան Երեւանցու հետ սկսում տպագրութիւնը՝ հիմք ընդունելով ու օգտագործելով Կիլիկիայի Հեթում Բ-ի պատուէրով 1295 թ. գրուածը: Այս բնագիրը Ոսկան Երեւանցին խմբագրում է ըստ վերագատայի, տպագրութեան ընթացքում թարգմանում եւ աւելացնում է Հին Կտակարանի մի

քանի գրքեր, որոնք չեն եղել հայերէն Աստուածաշնչում: Տպագրելիս փորձում է միջին դիրք գրաւել դասական հայերէն բնագրի եւ վերագատայի միջեւ, որպէսզի այն ընդունելի լինէր հայոց տարբեր դաւանական համայնքների համար, որոնց նա լատիներէն գրքի փոխարէն առաջարկելու էր հայերէնն ու հայատառը:

Երկու տարի եօթ ամսում է տպագրուել Ասկանեան Աստուածաշունչը: Տպագրութիւնը կատարուած էր վարպետօրէն, անուանաթերթերը կազմուած էին չորս փայտափորագիր կտորներից՝ աջ եւ ձախ զարդանկարների մէջ Հաւատ եւ Յոյս խորհրդանշանները ներկայացնող մարդկային կերպարներով: Աստուածաշունչ բառը թուղթագրով էր, կազմը՝ կարմիր, կաշեպատ, հաստ տախտակից: Բանիմացօրէն կիրառուած էին հայկական առողանութեան գրեթէ բոլոր հիմնական նշանները, գործածուած եօթ տեսակ տպագրատառեր: Գրեթէ բոլոր նկարները գերմանացի Քրիստոֆել վան Ջիխեմ կրտսերի փորագրութիւններն էին, որոնք կատարուած էին Ռաֆայէլի, Ալֆրեատ Դիւրերի, Հենդրիկ Գուլցիուսի եւ եւրոպական այլ նշանաւոր վարպետների յայտնի նկարներից:

Ամստերդամում Ոսկան Երեւանցին հրատարակում է 14 անուն գիրք՝ Նոր Կտակարան, Առաքել Դաւրիթեցու «Գիրք պատմութեան», «Տօնացոյց», Շարակնոց, եւ այլն:

Իր գործի վարպետը իրաւունք է ստանում տպարան հիմնել Ֆրանսայի որեւէ քաղաքում: Երկրի թագաւոր Լիւդովիկոս 14-րդը տալիս է նրան այդ հնարաւորութիւնը՝ պայմանով, որ հրատարակուելիք գրքերը հակառակ չլինեն կաթողիկէ եկեղեցու դաւանանքին: Սակայն Ոսկան Երեւանցին չի հաշտուում այն մտքի հետ, որ պէտք է «սրբագրուել» իր ժամագիրքը, Մաշտոցը՝ «հոռոմեան կրօնի վարդապետութեանը հակառակ չերեւալու համար: Եւ Ֆրանսայից անցնում է Իտալիա, կանգ առնում Լիւոռնոյում, այնտեղ տպագրում

«Պարտէզ հոգեւոր» եւ Ռոբերտոս Բելարմինոսի «Վարդապետութիւն քրիստոնէական» թարգմանական գրքերը: Սակայն նիւթական աջակցութիւն չգտնելով՝ տպարանը տեղափոխում է Մարսել՝ ընկերանաւորով քահանայ Համագասպեանի հետ, որը, սակայն, յետագայում մեծ անախորժութիւններ էր պատճառելու նրան: Տեղի կաթողիկէ հոգեւոր իշխանութիւնը Հոռոմից կարգադրութիւն էր ստացել հետեւել հայ գործչի հրատարակութիւններին: Ոսկան Երեւանցուց պահանջել էին «հայերէն եւ լատիներէն գրուած «հաւատոյ դաւանութեան» գրութիւն եւ յայտնել, որ գրաքննուելու են նրա տպարանում հրատարակուող գրքերը: Չնայած այդ ամէնին, նա որոշում է «Հայաստանեայց եկեղեցու ծէսերուն» հակառակ որեւէ բան չտպագրել: Բայց նրա գործընկեր Համագասպեան քահանան այդ մասին տեղեկացնում է իշխանութեանը: Եւ սկսում է գործի քննութիւն: Երանդատ հրատարակիչն ահազնօրէն ծանր է տանում նման դաւաճանութիւնը, յուսալքուած, հիւանդանում, ընկնում է անկողին եւ որոշ ժամանակ անց կնքում իր մահկանացուն:

Ոսկան Երեւանցին իր կենսագրութիւնը՝ «Պատմութիւն վարդապետին Ոսկանայ Երեւանցուց եւ կենցաղավարութիւն նորին» վերնագրով, տպագրել է Առաքել Դաւրիթեցու «Գիրք պատմութեան» աշխատութեան վերջում՝ որպէս առանձին գլուխ: Նրա հիմնադրած տպարանը գործել է քառօրդ դար, այդ ընթացքում տպագրել 40 անուն կրօնաեկեղեցական եւ աշխարհիկ բարձրորակ տպագրութեամբ հայերէն գրքեր, որոնցից նշանաւոր են Աստուածաշունչը, Մովսէս Խորենացու «Աշխարհացոյցը», վարդան Այգեկցու առակները: Եւ այս ամէնը՝ տարբեր քաղաքներում՝ Ամստերդամ, Լիվոնո, Մարսել: Ասել է թէ՛ քաղաքից՝ քաղաք, չարչարանաց ճանապարհ, որն անցնելու էր իր գործի ճգնաւորի նուիրումով եւ գալիք ժամանակներին թողնելու էր անխամբելի իր անունը՝ Ոսկան Երեւանցի...

Norayr Daduryan Armeno-Turkish Translation Services

From Armeno-Turkish to Armenian and English languages. Bring your family's history back to life! Family letters, postcards, diaries, and more... Please reach out for quotes Website: norayr.daduryan.com Email: norayrdaduryan@gmail.com

ՎԱՐՉՈՒ ՍՐԱԿ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՍԱՐ)

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly Enclosed a check for (one year) * \$50,00 * \$100,00 (first class) for USA \$ 125,00 (Air Mail) for Canada. \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: ----- Address: ----- City: ----- State:----- Zip Code:----- Country: ----- Tel:----- Email:-----

ՄԱՐԱԶԴ



ՊԱՅԾԱՌ ՄԻՆԱԿՈՍԵԱՆ
(Ծնեալ՝ 23 Յունիս, 1937 Ալէյ, Լիբանան)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝ Պայծառ Մինակոսեանի մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի 25 Յունուար 2023-ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Շաբաթ, 18 Փետրուար 2023-ին, առաւօտեան ժամը 10:30-ին Joshua Memorial Park-808 E Lancaster Blvd. Lancaster, CA 93535 գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝
- Զաւակը՝ Տիար Նազարէթ Մինակոսեան
- Դուստրը՝ Տէր եւ Տիկին Յարութ եւ Ռոզին Տէր Դաւիթեան
- Թոռնիկը՝ Տէր եւ Տիկին Ռազմիկ եւ Արդին Տէր Դաւիթեան եւ զաւակը՝ Վան
- Թոռնիկը՝ Տէր եւ Տիկին Մասիս եւ Արազ Թորոսեան եւ զաւակները՝ Արեւ, Էլիէլ եւ Շահան
- Քոյրը՝ Մարի Շայպան եւ զաւակը՝ Ֆատի
- Քոյրը՝ Տէր եւ Տիկին Օսքար եւ Նորա Ռուանօ-Ալոզեան
- Քոյրը՝ Զապէլ Օհանեան
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկին Գէորգ եւ Ժիւլիէթ Օհանեան եւ զաւակը՝ Սուզաննա
- Զարմիկը՝ Տէր եւ Տիկին Ժօզէֆ եւ Նիւրբա Շայպան
- Զարմիկը՝ Տիար Արշակ Ալոզեան եւ զաւակները՝ Շանթ եւ Նայիրի
- Զարմուհին՝ Տէր եւ Տիկին Կէրի եւ Զարի Վարժապետեան եւ զաւակները՝ Նորա եւ Արիս
- եւ համայն Մինակոսեան, Տէր Դաւիթեան, Շայպան, Օհանեան, Ալոզեան, Վարժապետեան, Յակոբեան, Թորոսեան, Թիւթիւնճեան, Տէր Սարգիսեան եւ Աշճեան ընտանիքները:

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել՝ AEBU Scholarship Fund 1060 N Allen Ave. Pasadena, CA 91104 եւ Pasadena Armenian Church of the Nazarene 1500 E Washington Blvd. Pasadena, CA 91104

Յաւակցութիւն

ՊԱՅԾԱՌ ՄԻՆԱԿՈՍԵԱՆԻ մահուան տխուր առթիւ Հայկական Կրթական Բարեփրական Միութեան կրթնապատնէքը յանձնախումբը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի դուստրին՝ Դոկա Ռոզին Տէր Դաւիթեանին եւ ամուսնոյն՝ Յարութ Տէր Դաւիթեանին, զաւակներուն, թոռներուն եւ համայն ազգականներուն: Հայկական Կրթական Բարեփրական Միութեան կրթնապատնէքը Յանձնախումբը

Յաւակցութիւն

ՊԱՅԾԱՌ ՄԻՆԱԿՈՍԵԱՆԻ մահուան տխուր առթիւ Նոր Սեբունդ Մշակութային Միութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ Տէր եւ Տիկին Յարութ եւ Ռոզին Տէր Դաւիթեանին, զաւակներուն, թոռներուն եւ համայն ազգականներուն: Նոր Սեբունդ Մշակութային Միութիւն

«Արցախը Ատրպէյճանի Կազմում Ծանաչելու» Սէջ

Շարունակուած էջ 2-էն
օրէնսդրութեան շրջանակներում: Զրօ արձագանք Նիկոլ Փաշինեանի կողմից: Լաւ, էդ դէպքում կարող էք համարել՝ չի կողմնորոշուել ինչ անի, բայց յետոյ կարող էք արձագանքել: Չի արել: Երկրորդը՝ Լաւրովի յայտարարութիւնները մենք տեսանք, որ Պրահայում եկել են հսինչ համաձայնութեան, ընդ որում՝ յղում անելով Ալմա-Աթայի հռչակագրին, որտեղ հայկական կողմը ունի վերապահումներ, բայց ՀՀ-ն չի բարձրաձայնում դրա մասին», - յայ-

տարարեց «Դօր.ամ» կայքի սեփականատէրը՝ փորձելով «ոտի վրայ» ֆուտայնել իրեն ունկնդրողներին: Թեւանեանի սոյն՝ արձագանքեան կեղծ պնդման առաջին հերքողը լուսնի ճիւղերի հրաւիրեալ, հրապարակախօս, քաղաքագէտ, Բրիտանիայի անուան համալսարանի նախկին ռեկտոր Սուրէն Զոլեանն էր, որն, ըստ էութեան, Թեւանեանին եւ միւսներին առաջարկեց «դողերի բախչեք» ընկնելու փորձարէն վերադառնալ իրաւական դաշտ եւ տեսնել, թէ ինչու է այդ փաստաթղթի էությունը. «Եկէք հասկանանք, թէ

դէ իւր է ինչ է գրուած այդ փաստաթղթում. ով ինչ է խօսել, ով ում ինչ է խոստացել՝ մենք դրա մասին չգիտենք: Պրահայի փաստաթղթում կայ յիշատակում, յղում Ալմա-Աթայի հռչակագրին, որը, ես կարծում եմ, պէտք է ընդունել այն մեկնաբանութեամբ, թէ դա իբր Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան ճանաչումն է»: Ըստ Զոլեանի՝ այդ փաստաթուղթը կարող է մեկնաբանուել այնպէս, ինչպէս դա մեկնաբանուել է 1992 թուականին: «Գործում է միջազգային պայմանագրերի մեկնաբանման յատուկ օրէնք, եւ այնտեղ նշուած է, որ փաստաթղթի մեկնաբանութիւնը համապատասխանում է ընդունման պահին, այսինքն՝ մենք պէտք է հիմք ընդունենք 1991 եւ 92 թուականների մեկնաբանութիւնները», - նշեց Զոլեանը՝ յաւելելով. «Անձամբ ես, լինելով այն ժամանակ Արցախի հարցերով յանձնաժողովում (Զոլեանը եղել է ՀՀ ԳԽ Արցախի հարցերի յատուկ յանձնաժողովի քարտուղար, «Արցախ» պատգամաւորական խմբի համանախագահ-խմբ.), ներկայացրել եմ յանձնաժողովի անունից այն վերապահումը, որը փաստացի նշանակում է Լեռնային Ղարաբաղի ճանաչումը, որովհետեւ այնտեղ բերուած էին այն իրաւական հիմքերը, որոնց հիման վրայ հենց Ղարաբաղն է օրինական կարգով դուրս եկել, իսկ Ատրպէյճանը՝ ոչ: Ատրպէյճանը չի անցկացրել այն հանրաքուէն, որի արդիւնքների հիման վրայ ԱԴԽ-ի կարծիքը պիտի հաշուարկուէր: Այն ժամանակ մենք ստանում էինք Ատրպէյճանի ամբողջ լրատուութիւնը, եւ այնտեղ որեւէ մի ձեւով այդ փաստաթուղթը ստորագրած Մութալիբովը (Ատրպէյճանի առաջին նախագահ-խմբ.) չէր ասում, որ Հայաստանը ճանաչել է Արցախը Ատրպէյճանի կազմում: Հակառակը՝ Ատրպէյճանի մէՃԼիսը հետ է կանչել Մութալիբովի ստորագրութիւնը: Այսինքն՝ եթէ խօսում ենք Ալմա-Աթայի փաստաթղթի մասին, այնտեղ Ատրպէյճանը, այսպէս ասած՝ «նչ ստալալո»: 1993 թուականին արդէն Հեյդար Ալիեւը ստիպուած է լինում նորից ստորագրել»: Զոլեանն այնուհետ, ՌԴ ԱԳ նախարար Սերգէյ Լաւրովի յայտարարութեան համատեքստում, թէ՛ «Ալմա-Աթայի հռչակագիրը ենթադրում է Լեռնային Ղարաբաղի Ատրպէյճանի կազմում», նշեց. «Մեր բարեկամ Սերգէյ Լաւրովին կարելի է յուշել, որ նրա արած մեկնաբանութիւնը հակասում է հենց ՌԴ-ի շահերին, որովհետեւ այն ժամանակուայ ղեկավարութիւնը Մարտին անցկացրել է հանրաքուէ, որով Ռուսաստանը մտնում էր իՍՄ կազմում, եւ, բնական է, նոյնը պէտք է տեղի ունենար նաեւ ԱԴԽ-ի եւ մնացածի դէպքում: Այսինքն՝ այն մեկնաբանութիւնը, որը տալիս է Լաւրովը, հակասում է թէ՛ այն ժամանակուայ Ռուսաստանի շահերին, թէ՛ այսօրուայ, որովհետեւ բազմաթիւ հարցեր են ծագում, որոնց մասին ես չեմ ուզում խօսել»: Զոլեանն այնուհետ յաւելեց, թէ Ալմա-Աթայի փաստաթղթում յստակ նշուած են այն հիմքերը, ըստ որոնց՝ Լեռնային Ղարաբաղը պէտք է ճանաչուէր որպէս ԱՊՀ-ի մաս: «Ես կարծում եմ, որ մեր ԱԳՆ-ն պէտք է համապատասխան յայտարարութեան ձեւով վաւերացնի այն մեկնաբանութիւնը, որը կար 1992 թուականին: Այսինքն՝ դա որեւէ կապ չունէր տարածքային ամբողջականութեան հետ, եւ տալով այս մեկնաբանութիւնը՝ մենք կարող ենք

շրջել Պրահայի փաստաթուղթը, որը անընդհատ մեր դէմ է օգտագործուում (յանուն արդարութեան պէտք է նշել, որ այն մեր դէմ են օգտագործում ՀՀ ընդդիմութիւնն ու մէկ էլ Լաւրովը-խմբ.): Մենք պէտք է ասենք, որ հենց այդ փաստաթղթով են ստեղծուում հիմքերը ճանաչելու»: Ըստ քաղաքագէտի՝ հաշուի առնելով միջազգային իրադրութիւնը եւ Արցախում առկայ հումանիտար ճգնաժամը՝ ստեղծուել են բաւականին լաւ հիմքեր՝ «ուղղելու նախկինների սխալը» եւ ինչպէս հասկացուեց Զոլեանի խօսքից, ճանաչելու Արցախի անկախութիւնը: Յաջորդ իրաւական ապտակը՝ ուղղուած Ալմա-Աթայի վայ մեկնիչներին, ակամայ հասցուեց ՀՀ գործող Սահմանադրութեան համահեղինակ, սահմանադրագէտ Վարդան Պողոսեանի ելոյթում: Խօսելով խնդրոյ առարկայ հռչակագրի մասին՝ Պողոսեանը նշեց, թէ «մէջտեղ բերուած» Ալմա-Աթայի հռչակագիրը որեւէ իրաւական հիմք չի տալիս պնդելու, թէ «ՀՀ-ն ճանաչել է Արցախի նկատմամբ Ատրպէյճանի ինքնիշխանութիւնը»: «Վերապահման ժամանակ՝ 1992 թ. փետրուարի 8-ի, ՀՀ-ի կամքը անվերապահ է եղել, որտեղ ասում էր, որ նաեւ մինչեւ Խորհրդային Միութեան փլուզումը, վերանայր, այն ինքնավար միաւորները, որոնք անցկացրել են հանրաքուէ անկախութեան մասին, պէտք է իրաւունք ունենան մտնելու ԱՊՀ, բացի դրանից՝ ԱՊՀ պայմանագիրը Ատրպէյճանի համար ուժի մէջ է մտել 1993-ի Սեպտեմբերից: Հետեւաբար, նոյնիսկ եթէ ասենք, որ տարածքային ամբողջականութեան ճանաչումը վերաբերում էր Ատրպէյճանի ամբողջ տարածքին, միեւնոյն է՝ դա չէր կարող իրաւաբանական որեւէ հետեւանքներ առաջացնել: Եւ չմոռանանք, որ 1992 թուականի Յուլիսի 8-ին Գերագոյն խորհուրդը աներկբայ ձեւով յայտարարեց՝ որեւէ ձեւով անընդունելի է որեւէ միջազգային իրաւական փաստաթղթերում այն նշումը, որ Արցախը Ատրպէյճանի մաս է»: Ինչ է ստացուում. Աժ-ում այսօր հրաւիրուած լուսնի ճիւղերի ժամանակ Չախախտեցին ոչ միայն Ալմա-Աթայի փաստաթղթի՝ հայաստանեան ընդդիմութեան չարանեղ, խեղաթիւրուած, ինչու չէ նաեւ՝ «լաւրովեան» մեկնաբանութիւնները, այլեւ արձանագրուեց Պրահայի փաստաթղթի, այսպէս ասած, «ոչ կրիմինալ» բովանդակութիւնը: Մէջբերենք փաստաթղթի այդ հատուածը. «Հայաստանն ու Ատրպէյճանը հաստատեցին իրենց յանձնառութիւնը ՄԱԿ-ի կանոնադրութեանը եւ 1991թ. Ալմա-Աթայի հռչակագրին, որոնց միջոցով երկու կողմերն էլ ճանաչում են միմեանց տարածքային ամբողջականութիւնն ու ինքնիշխանութիւնը: Նրանք հաստատեցին, որ դա հիմք կը հանդիսանայ սահմանազատման հարցերով յանձնաժողովների աշխատանքների համար»: Իհարկէ, դժուար է ակնկալել, որ խորհրդարանական ընդդիմութիւնը համատեղ յայտարարութեամբ հանդէս կը գայ եւ կ'ազդարարի «Նիկոլ Փաշինեանը ճիշտ էր, մենք ու պարոն Լաւրովը սխալուեցինք», սակայն գոնէ կարող է խոստանալ ինքն իրեն՝ այլեւս չզբաղուել զեղծարարութեամբ, վնասարարութեամբ, երբ բանը յատկապէս հասնում է պետական, ազգային շահեր շոշափող փաստաթղթերի մեկնաբանմանը: «Civic.am»

«Ինթեր» Յաղթեց «Աթալանթային» Եւ Հասաւ Գաւաթի Կիսաեզրափակիչ

Միլանի «Ինթերը» դարձաւ Իտալիոյ 2023 թուականի գաւաթի խաղարկութեան կիսաեզրափակիչ փուլի առաջին մասնակիցը:

Քառորդ եզրափակիչ խաղի ընթացքին գործող գաւաթակիրը պաշտպան Մատէօ Դարմիանի նշանակած միակ կողին շնորհիւ յաղթեց «Աթալանթային»՝ 1:0: «Ինթերի» խումբէն խաղցող հայաստանցի ֆուտպոլիստ Հենրիխ Մխիթարեան մասնակցաւ ամբողջ խաղին:

Կիսաեզրափակիչին «Ինթեր» կը հանդիպի «Եովենտուս» - «Լացիօ» գոյգի յաղթողին հետ: Այդ փուլի առաջին խաղը կը կայանայ Ապրիլի 4-ին, իսկ պատասխան հանդիպումը՝ Ապրիլի 26-ին:

«Արսենալ» Պարտուեցաւ «Էվերթոնին»

Club	MP	W	D	L	GF	GA	GD	Pts	Last 5
1 Arsenal	20	16	2	2	45	17	28	50	✓✓✓✓✓
2 Man City	21	14	3	4	53	21	32	45	✓✓✓✓✓
3 Man United	21	13	3	5	34	26	8	42	✓✓✓✓✓
4 Newcastle	21	10	10	1	34	12	22	40	✓✓✓✓✓
5 Tottenham	22	12	3	7	41	31	10	39	✓✓✓✓✓
6 Brighton	20	10	4	6	38	27	11	34	✓✓✓✓✓
7 Brentford	21	8	9	4	35	28	7	33	✓✓✓✓✓
8 Fulham	22	9	5	8	32	30	2	32	✓✓✓✓✓

Անգլիոյի առաջնութեան 22-րդ հանգրուանին առաջատար «Արսենալը» Լիվերփուլի մէջ հիւրընկալուեցաւ անգլիացի Շոն Դալշի գլխավորած «Էվերթոնին»: Սպանացի Միկել Արտետայի գլխավորած խումբը պարտութիւն կրեց նուագագոյն արդիւնքով:

«Էվերթոնի» միակ կողը 60-րդ վայրկեանին նշանակեց անգլիացի պաշտպան Ջեյմս Տարկովսկին:

20 խաղէն յետոյ «Արսենալ» 50 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 5 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող ախոյեան «Մանչըսթըր Սիթիէն»:

«Թոթենհեմ» Պարտութեան Մատնեց «Մանչըսթըր Սիթիին»

Անգլիոյ առաջնութեան 22-րդ հանգրուանին ախոյեան «Մանչըսթըր Սիթիին» հիւրընկալուեցաւ Լոնտոնի «Թոթենհեմին»: Գատալոնացի Խոսեպ Գուարդիոլայի գլխավորած խումբը պարտութիւն կրեց նուագագոյն հաշուով:

«Թոթենհեմի» միակ կողը 15-րդ վայրկեանին նշանակեց անգլիացի յարձակող Հարի Քեյնը:

«Մանչըսթըր Սիթիին» (21 խաղ) 45 կէտով երկրորդն է եւ 5 կէտ ետ է առաջատար «Արսենալէն» (20 խաղ): «Թոթենհեմ» (22 խաղ) 5-րդն է՝ 39 կէտ:

«Մանչըսթըր Եունայթըտի» Յաղթանակը, «Լիվերփուլի» Պարտութիւնը

Անգլիոյ առաջնութեան 22-րդ հանգրուանին «Մանչըսթըր Եունայթըտ» իր դաշտին վրայ մրցեցաւ Լոնտոնի «Քրիսթալ Փելասի» հետ: Հոլանտացի Էրիկ Տեն Հագի գլխավորած խումբը յաղթեց 2:1 արդիւնքով:

Մանչըսթըրեան ակումբէն աչքի ինկան փորձուկալացի կիսապաշտպան Պրոնու Ֆերնանտէշն ու անգլիացի յարձակող Մարկուս Ռեշֆորտը:

«Մանչըսթըր Եունայթըտ» 42 կէտով կը գրաւէ երրորդ տեղը: «Քրիսթալ Փելասը» 12-րդն է՝ 24 կէտ:

«Լիվերփուլը» հիւրընկալուեցաւ «Վուլվերհեմփթընին»: Գերմանացի Եուրգեն Կլոպի գլխավորած խումբը պարտութիւն կրեց 0:3 արդիւնքով եւ 20 խաղէն յետոյ 29 կէտով 10-րդ տեղը կը գրաւէ: «Վուլվերհեմփթընը» 15-րդն է՝ 20 կէտ:

«Ունիոն Պեռլինը» Յաղթեց Եւ Բարձրացաւ Առաջին Տեղ

Գերմանիոյ առաջնութեան 19-րդ հանգրուանին «Ունիոն Պեռլինը» իր դաշտին վրայ մրցեցաւ «Մայնցի» հետ եւ առաւելութեան հասաւ 2:1 արդիւնքով:

«Ունիոն Պեռլինը» 39 կէտով գլխավորեց մրցաշարային աղիւսակը եւ 2 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող ախոյեան «Պայերնին», որ 1 խաղ քիչ կատարած է:

Տորտմունդի «Պորտսիան» սեփական խաղադաշտին վրայ 5:1 արդիւնքով պարտութեան մատնեց «Ֆրայպուրկին» եւ 37 կէտով երրորդն է:



«Պարսելոնան» Ուժեղ Էր «Սելիլիայէն» Եւ 8 Կէտ Առաջ Է «Ռեալէն»



Սպանիոյ առաջնութեան 20-րդ հանգրուանին փոխախոյեան «Պարսելոնան» սեփական դաշտին վրայ մրցեցաւ «Սելիլիայի» հետ եւ յաղթեց 3:0 արդիւնքով:

«Պարսելոնան» 53 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ արդէն 8 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Ռեալէն», որ այս հանգրուանին 0:1 արդիւնքով պարտուեցաւ «Մալորկայէն»:

Հաքիմի Եւ Մեսիի Կուերը Յաղթանակ Ապահովեցին ՊՍԺ-ին



Ֆրանսայի առաջնութեան 22-րդ հանգրուանին ախոյեան ՊՍԺ-ն ընդունեց «Թուլուզին»: Ֆրանսացի Քրիստոֆ Կալտիէի գլխավորած խումբը յաղթեց 2:1 արդիւնքով:

20-րդ վայրկեանին կողմէ թողելէ յետոյ ՊՍԺ-ն հաւասարութիւնը վերականգնեց 38-րդ վայրկեանին մարտքցի պաշտպան Աշրաֆ Հաքիմիի կողմէ շնորհիւ: 58-րդ վայրկեանին անոր փոխանցումէն յետոյ փարիզեան խումբի յաղթական կողը նշանակեց արժենթինացի յարձակող Լիոնել Մեսին:

ՊՍԺ-ն 54 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 8 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Մարսելէն», որ 1 խաղ քիչ կատարած է: «Թուլուզը» 12-րդն է՝ 29 կէտ:

«Նափոլին» Յաղթեց Եւ Առաջատար Է 13 Կէտով

Իտալիոյ առաջնութեան 21-րդ հանգրուանին առաջատար «Նափոլին» հիւրընկալուեցաւ «Սպեցիայէն» եւ առաւելութեան հասաւ 3:0 արդիւնքով:

Իտալացի Լուչանօ Սպալետիի գլխավորած խումբէն երկու կողմի հեղինակ դարձաւ նիճերիացի յարձակող Վիկտոր Օսիմենը: Աչքի ինկաւ նաեւ վրացի յարձակող Խվիչա Կվարացիսելիան, որ 11-մեթրանոցէն նշանակեց «Նափոլիի» երրորդ կողը:

«Ինթերը» Յաղթեց «Միլանին»

Իտալիոյ առաջնութեան 21-րդ հանգրուանին փոխախոյեան «Ինթեր» ընդունեց ախոյեան «Միլանին»: Նուագագոյն հաշուով առաւելութեան հասաւ իտալացի Սիմոնէ Ինձագիի գլխավորած խումբը:

«Ինթեր» 4 հարուած կատարեց մրցակիցի բերդին, «Միլանը» ոչ մէկ հարուած չկատարեց:

Հայաստանի հաւաքականի նախկին աւագ Հենրիխ Մխիթարեանը «Ինթերի» հինական կազմին մէջ էր: Ան 67-րդ վայրկեանին ստացաւ դեղին քարտ եւ փոխարինուեցաւ 71-րդ վայրկեանին:

«Ինթեր» 43 կէտով երկրորդ տեղը: Առաջատար է «Նափոլին»՝ 13 կէտի առաւելութիւն ունի: